ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԲՈԼՈՐԻ ՀԱՄԱՐ

Տեղեկատվություն երեխաների խնամքի ծառայություններ մատուցողների համար Լոս Անջելեսի Շրջանում նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունները ընդլայնելու վերաբերյալ

COUNTY OF LOS ANGELES
OFFICE FOR THE ADVANCEMENT OF EARLY CARE AND EDUCATION

CONRAD N. Hilton FOUNDATION

Public Counsel

COUNTY OF LOS ANGELES Public Health

Այս ձեռնարկը պատրաստել է

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչության Վաղ շրջանում խնամքի և կրթության զարգացման գրասենյակը (OAECE)՝

Քոնրադ Ն. Հիլթոն հիմնադրամի հետ համագործակցությամբ:

Մենք ցանկանում ենք երախտագիտությամբ նշել այն անձանց մասնակցությունը, որոնք հնարավոր դարձրին այս հրատարակումը:

Շնորհակալություն հետևյալ անձանց.

Դեբրա Քոլման **(Debra Colman)՝** Վաղ տարիքում խնամքի և կրթության զարգացման գրասենյակ

Լիան Դրոգին **(Leanne Drogin)՝** Վաղ տարիքում խնամքի և կրթության զարգացման գրասենյակ

Էլիզաբեթ «Բեթսի» Ջակոբի **(Elizabeth "Betsy" Jacoby)՝** Վաղ տարիքում խնամքի և կրթության զարգացման գրասենյակ

Շողիկ Խադարյան **(Shoghig Khadarian)** Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչություն, Համայնքային խնամքի արտոնագրման բաժին

Ռիտու Մահաջան **(Ritu Mahajan),** Հանրային Խորհուրդի անդամ

Ջենի Չունգ Մեջիյա **(Jenny Chung Mejia),** Ջենի Չունգ Մեջիյա Քոնսալթինգ

Վուին Հոպկինս **(Wuin Hopkins)**, Վուին Հոփքինսի Արվեստ + Դիզայն

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ

ԾԱՆՈԹԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՍԵՂՄԵՔ
ՏԵՔՍՏԻ • ՎԱՆԴԱԿԻ • ԹԱԲԻ ՎՐԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- Ներածություն 5
  - Այս ձեռնարկի նպատակը 5
  - Ինչպե՞ս օգտվել այս ձեռնարկից 5
- Անցումային շրջանի մանկապարտեզի ընդլայնում 6
  - Ի՞նչ է անցումային շրջանի մանկապարտեզը 6
  - Երեխաների խնամքի ծրագրերի հնարավոր ազդեցությունն ու հնարավորությունը 6

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ 7

- Հանրային խնամքի կազմակերպման արտոնագրման բաժնի (CCLD) սահմանումներ 7-8
- Պետական գործակալություններ 9-10
- Հիմնական աղբյուրներ 11
- Կանոնակարգեր 12

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐ 13

- Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնմանը վերաբերող հարցեր 15
  - **1.** Արտոնագրում 15
    - CCLD կանոնակարգեր նոր տարիքային խմբի սպասարկման և արտոնագրված կարողությունների ավելացման համար 16
  - **2.** Երեխա-խնամող հարաբերակցություն 17-18
  - **3.** Անձնակազմի որակավորում 19
  - **4.** Սարքավորումներ 20
  - **5.** Ֆիզիկական տարածքում փոփոխություններ 21
    - Ներս/Դուրս 21
    - Վերանորոգում/Շինարարություն 22
  - **6.** Ֆինանսական բիզնես մոդել 23
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսեր 23
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսերի մոտավոր բյուջե 24
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսեր 25
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսերի մոտավոր բյուջե 26-27
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված եկամուտներ 28
  - **7.** Ընտանիքների իրազեկում 29-30

ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 31

- Նկատառումներ՝ կապված նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնմանն հետ 33
- Սահմանումներ 34
  - 1. Արտոնագրում 34
    - CCLD կանոնակարգեր նոր տարիքային խմբի սպասարկման և արտոնագրված կարողությունների ավելացման համար 35
  - 2. Հարաբերակցություն. երեխա-ուսուցիչ և տնօրինություն 36
    - Տնօրինություն 36
    - Երեխա-ուսուցիչ 36-41
  - 3. Անձնակազմի որակավորում 42
    - Անձնակազմի որակավորման ընդհանուր պահանջներ 42
    - Անձնակազմի որակավորման պահանջները ուսուցչի օգնականի, ուսուցչի և լիարժեք որակավորում ունեցող ուսուցչի համար 43-44
  - 4. Սարքավորումներ 45-46
  - 5. Ֆիզիկական տարածքում փոփոխություններ 47
    - Ներս/Դուրս 47
    - Վերանորոգում/Շինարարություն 48
  - 6. Ֆինանսական բիզնես մոդել 49
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսեր 49
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսերի մոտավոր բյուջե 50
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսեր 51
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսերի մոտավոր բյուջե 52-53
    - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված եկամուտներ 54
  - 7. Ընտանիքների իրազեկում 55-56

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ 57

- ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ 57
  - Դաշնային 57
  - Նահանգային 57
  - Լոս Անջելեսի Շրջան 57-58
- Շահույթ չհետապնդող գործակալություններ 59
  - Անվճար իրավաբանական աջակցություն 59
  - Աղբյուրներ և աջակցություն երեխաների խնամքի ծառայություններ մատուցողների համար 60
- Ֆինանսական պլանավորման աղբյուրներ 61

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ձեռնարկի նպատակը

Լոս Անջելեսի Շրջանում[1] նորածինների և փոքր երեխաների խնամքի խիստ և երկարատև կարիքը և Կալիֆորնիաում անցումային մանկապարտեզի ընդլայնումը երեխաների խնամքով զբաղվողներին կարևոր հնարավորություն են տալիս ընդլայնելու իրենց ծառայությունները նորածինների և մանկահասակ երեխաների համար:

Ըստ «Վաղ տարիքում խնամքի և կրթության (ECE) կարիքների գնահատման» 2022թ-ի տվյալների՝ Լոս Անջելեսի Շրջանում ապրում է ավելի քան 484 000 նորածին և մանկահասակ երեխա, և արտոնագրված երեխաների խնամքի կենտրոնների և երեխաների ընտանեկան խնամքի տների միջոցով Շրջանը կարողողություն ունի սպասարկելու մինչև 24 ամսական երեխաների միայն 4 տոկոսին:

Տրամադրվող տեղեկատվությունը նախատեսված է որպես օգտագործողի համար հարմար ձեռնարկ («Ձեռնարկ»), որը Լոս Անջելեսի Շրջանում[2] երեխաների ընտանեկան խնամքի տներում և երեխաների խնամքի համայնքային կենտրոններում ծառայություններ մատուցողներին տալիս է տեղեկություններ նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված 7 հիմնական կետերի մասին, որոնք ներառում են՝

1. Արտոնագրում
2. Հարաբերակցություն. երեխա-խնամող և երեխա-ուսուցիչ
3. Անձնակազմի որակավորում
4. Սարքավորումներ
5. Ֆիզիկական տարածքում փոփոխություններ
6. Ֆինանսական բիզնես մոդել
7. Ընտանիքների իրազեկում

Ինչպե՞ս օգտվել այս ձեռնարկից

Այս ձեռնարկը հասանելի է առցանց անգլերենով և իսպաներենով: Այս ձեռնարկը հրապարակվել է 2024 թվականի մարտին և տրամադրում է տեղեկություններ նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման վերաբերյալ: Ձեռնարկի վերջում տրվում է աղբյուրների տեղեկատու, որը ներառում է Համայնքային խնամքի արտոնագրման բաժնի (CCLD) համապատասխան դրույթները, Ձեռնարկում նշված հաստատությունների և կազմակերպությունների կապի տվյալները և ֆինանսական բիզնես-մոդելի աղբյուրները:

Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները կարող են օգտագործել այս Ձեռնարկը որպես ուղեցույց, սակայն նրանց խորհուրդ է տրվում ծանոթանալ երեխաների խնամքի հատուկ իրենց ծրագրին վերաբերող գործող կանոններին, քանի որ այս ձեռնարկում եղած տեղեկատվությունը ժամանակի ընթացքում կարող է փոխվել:

[1] Ներկայիս Վաղ տարիքում խնամքի և կրթության (ECE) համակարգը կարող է սպասարկել մինչև երեք տարեկան երեխաներ ունեցող այն ընտանիքների միայն 13%-ին, որոնք սուբսիդավորվող (դրամական օգնությամբ) խնամքի իրավունք ունեն: Լոս Անջելեսի Շրջանի Երեխաների խնամքի ծրագրավորման հանձնաժողով, «Լոս Անջելեսի Շրջանի կարիքների գնահատման տեխնիկական հաշվետվություն. 2017 թ.» (2017)՝ https://childcare.lacounty.gov/wp-content/uploads/2018/11/TechRptState201711July18.pdf (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

[2] Այս ձեռնարկը նախատեսված չէ երեխաների խնամքի կենտրոնների այն ծրագրերի համար, որոնք իրականացվում են դպրոցական շրջանի կողմից կամ արտոնագրված են միայն դպրոցական տարիքի մանկական խնամքի ծառայություններ մատուցելու համար:

Ի՞նչ է անցումային շրջանի մանկապարտեզը

2021 թվականին նահանգապետ Գևին Նյուսոմը ստորագրել է մի օրենք, ըստ որի Կալիֆորնիայի ցանկացած դպրոցական շրջան, որտեղ գործում է մանկապարտեզ, պետք է ապահովի նաև «Անցումային մանկապարտեզ» (TK) ծրագիր, որին պետք է մասնակցեն տարիքի վրա հիմնված իրավունք ունեցող երեխաները: 2025-2026թթ.-ին տեղական կրթական մարմիններից (LEAs) պահանջվում է անցումային մանկապարտեզ ունենալ բոլոր այն երեխաների համար, ովքեր մինչև տվյալ ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ը կդառնան 4 տարեկան[3]:

Անցումային մանկապարտեզը (TK) ընդգրկված է հանրային դպրոցների K-12 համակարգում և մանկապարտեզի երկամյա ուսումնական ծրագրի առաջին տարին է, որը պետք է վարի ուսուցիչը, ով ունի համապատասխան որակավորում անցումային մանկապարտեզում դասավանդելու համար[4]: TK-ն պահանջում է առնվազն 3 ժամ ուսումնական ժամանակ[5]: TK-ում ընդգրկվելն ընտրովի է[6]:

Երեխաների խնամքի ծրագրերի հնարավոր ազդեցությունն ու հնարավորությունները

Քանի որ անցումային մանկապարտեզները (TK) շարունակում են ընդլայնվել, 3 և 4 տարեկաններին սպասարկող երեխաների խնամքի ծրագրերում երեխաների թիվը ամենայն հավանականությամբ կնվազի, քանի որ շատ երեխաներ կհեռանան ծրագրերից՝ TK ընդունվելու համար: Սա կարող է երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին հնարավորություն տալ լրացնել խնամքի թափուր տեղերը և բավարարել խիստ կարիքը՝ ընդլայնելով նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի իրենց ծառայությունները:

[3] Կալիֆորնիայի Կրթության Վարչություն, «Հաճախակի տրվող հարցեր համընդհանուր նախադպրոցական հաստատության վերաբերյալ» (2022)՝ https://www.cde.ca.gov/ci/gs/em/kinderfaq.asp#what-is-transitional-kindergarten-tk-updated-26-september-2022 (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

[4] Կալիֆորնիայի Կրթության Վարչություն, «Տեղեկատվություն անցումային մանկապարտեզի (TK) ծրագրի մասին» (2022)՝ https://www.cde.ca.gov/ci/gs/em/kinderfaq.asp #how-are-transitional-kindergarten-tk-programs-diferent-than-preschool-or-other-child-development-programs-ofered-by-local-education-agencies-leas-for-three- and-four-year-old-children-updated-27-may-2022 (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

[5] Կալիֆորնիայի Կրթության Վարչություն, «Դասաժամ և անցումային մանկապարտեզ(TK)» (2022)՝ https://www.cde.ca.gov/fg/aa/pa/tkfiscalfaq.asp#is-there-a-specific-number-of-instructional-minutes- required-for-transitional-kindergarten-tk-posted-19-dec-2022(վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

[6] Կալիֆորնիայի Կրթության Վարչություն, Տեղեկություններ ֆինանսավորման և հաշվետվության մասին»(2022)՝ https://www.cde.ca.gov/ci/gs/em/kinderfaq.asp#must-children-attend-transitional-kindergarten-tk-updated-26-september-2022 (վերջին այցը՝ 2023 թվականի գոստոսի 1-ին):

Համայնքային խնամքի արտոնագրման բաժնի (CCLD) սահմանումներ

Խնամքի ծառայություններ մատուցողի օգնական[7]: Առնվազն 14 տարեկան անձ, ով զբաղվում է երեխաների ընտանեկան խնամքի տանը և հիմնականում զբաղվում է երեխաների խնամքով ընտանեկան խնամքի տան աշխատանքային ժամերին:

Երեխաների խնամքի կենտրոն[8]: Ցանկացած կարողություն ունեցող երեխաների խնամքի հաստատություն՝ բացի երեխաների ընտանեկան խնամքի տներից, որը խմբային պայմաններում իրականացնում է երեխաների (մինչև 18 տարեկան) օրական 24 ժամից պակաս տևողությամբ ոչ բժշկական խնամք և հսկողություն:

Երեխաների խնամքի արտոնագիր[9]: Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային խնամքի արտոնագրման բաժնի կողմից տրված արտոնագիր, որը թույլ է տալիս անհատին աշխատել Կալիֆորնիայի երեխաների ընտանեկան խնամքի տանը կամ երեխաների խնամքի կենտրոնում:

Երեխաներին խնամքի ծառայություններ մատուցող[10]: Ցանկացած անձ, ով զբաղվում է երեխաների խնամքով, ինչպես արտոնագրված է Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչության Համայնքային խնամքի արտոնագրման բաժնի կանոնակարգերով և ներառում է արտոնագրություն ստացած անձին, ծառայություններ մատուցողի օգնականին և չափահաս փոխարինողին:

Երեխաների ընտանեկան խնամքի տուն **(Family Child Care Home)**[11]: Հաստատություն, որը ծառայություններ մատուցողի իսկ տանը 24 ժամից քիչ տևողությամբ կանոնավոր կերպով զբաղվում է 14 կամ ավելի փոքր թվող երեխաների խնամքով, պաշտպանությամբ և հսկողությամբ, երբ ծնողները կամ խնամակալները հեռու են, և այն կամ երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն է, կամ՝ երեխաների ընտանեկան խնամքի փոքր տուն: Տները ներառում է վարձով բնակարանները (apartments), սեփական բնակարանները (condos), բազմահարկ տները (townhomes) և առանձնատները:

Նորածին[12]: Մինչև 2 տարեկան երեխա:

Երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն (Large Family Child Care Home)[13]: Հաստատություն, որը զբաղվում է իննից տասնչորս երեխաների, ներառյալ՝ միչև 10 տարեկան այդտեղ բնակվող երեխաների խնամքով, պաշտպանությամբ և հսկողությամբ: Տունը ներառում է վարձով բնակարանները (apartments), սեփական բնակարանները (condos), բազմահարկ տները (townhomes) և առանձնատները:

Խաղահրապարակ[14]: Պարիսպներով շրջանակ, որի կողերը ամբողջական ցանցից կամ գործվածքից են, որոնք արգելված կամ հետ չի կանչված չեն Միացյալ Նահանգների Սպառողական ապրանքների անվտանգության հանձնաժողովի (US Consumer Product Safety Commission) կողմից:

[7] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA CODE REGS.), Հոդված 22, § 102352(a)(3) (2009):

[8] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA HEALTH & SAFETY CODE) § 1596.76 (Դիրինգ 2023):

[9] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA CODE REGS.), Հոդված 22, § 101152(I)(2) (2009):

[10] Տես նույն տեղում՝ § 102352(p)(3):

[11] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA HEALTH & SAFETY CODE) § 1596.78(a) (Դիրինգ 2023):

[12] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA CODE REGS.), Հոդված 22, § 101152(I)(1) (2009) և § 102352(I) (2009):

[13] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA HEALTH & SAFETY CODE) § 1596.78(b) (Դիրինգ 2023):

[14] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA CODE REGS.), Հոդված 22, § 102352(p)(2) (2009):

Համայնքային խնամքի արտոնագրման բաժնի (CCLD) սահմանումներ
(շարունակություն)

Նախադպրոցական տարիքի երեխա[15]: Երեխա, ով գրանցված չէ ոչ նորածինների խնամքի կենտրոնում, ոչ էլ դպրոցական տարիքի երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում:

Դպրոցական տարիքի երեխա[16]: Ցանկացած երեխա, որը համապատասխանում է հետևյալ պահանջներից որևէ մեկին.

(Ա) Ընդունվել է առաջին դասարան կամ ավելի բարձր դասարան, (Բ) Մասնակցում է երեխաների խնամքի ծրագրին, որը զբաղվում է բացառապես անցումային մանկապարտեզում/ մանկապարտեզում և ավելի բարձր դասարաններում գրանցված երեխաների խնամքով և հսկողությամբ:

Երեխաների ընտանեկան խնամքի փոքր տուն(Small Family Child Care Home)[17]: Հաստատություն, որը զբաղվում է ութ կամ ավելի փոքր թվով երեխաների, ներառյալ՝ միչև 10 տարեկան այդտեղ բնակվող երեխաների խնամքով, պաշտպանությամբ և հսկողությամբ: Տները ներառում են վարձով բնակարանները (apartments), սեփական բնակարանները (condos), բազմահարկ տները (townhomes) և առանձնատները:

Մանկահասակ երեխա[18]: 18-ից 36 ամսական երեխա:

Անցումային մանկապարտեզ (Transitional Kindergarten (TK))[19]. Մանկապարտեզի երկամյա ծրագրի առաջին տարին, որն օգտագործում է երեխայի տարիքինա ու զարգացմանը համապատասխան մանկապարտեզի փոփոխված ուսումնական ծրագիր:

[15] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA HEALTH & SAFETY CODE) § 1597.059(b) (Դիրինգ 2023):

[16] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA CODE REGS.), Հոդված 22, § 101152(s)(2) (2009):

[17] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA HEALTH & SAFETY CODE) § 1596.78(c) (Դիրինգ 2023):

[18] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA CODE REGS.), Հոդված 22, § 101216.4 (2009):

[19] Կալիֆորնիայի Կրթության Վարչություն, «Հաճախակի տրվող հարցեր համընդհանուր նախադպրոցական հաստատության վերաբերյալ» (2022)՝ https://www.cde.ca.gov/ci/gs/em/kinderfaq.asp#what-is-transitional-kindergarten-tk-updated-26-september-2022

(վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին): Կալիֆորնիայի Կրթության Վարչություն, «Տեղեկատվություն անցումային մանկապարտեզի (TK) ծրագրի մասին» (2022)՝ https://www.cde.ca.gov/ci/gs/em/kinderfaq.asp#what-is-upk-and-how-is-it-related-to-universal-transitional-kindergarten-utk-updated-27-may-2022, (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչություն, Համայնքային խնամքի արտոնագրման բաժին (CCLD)

Համայնքային խնամքի արտոնագրման բաժինը (Community Care Licensing Division) ապահովում է խնամքի տակ գտնվող երեխաների առողջությունն ու անվտանգությունը: CCLD-ն երեխաների խնամքի արտոնագրեր է տրամադրում երեխաների խնամքի բոլոր հաստատություններին՝ ներառյալ բոլոր երեխաների ընտանեկան խնամքի տներին և երեխաների խնամքի կենտրոններին: CCLD-ն ձգտում է խնամքի տակ գտնվող երեխաներին տրամադրել կանխարգելիչ, պաշտպանիչ և որակյալ ծառայություններ՝ ապահովելով, որ արտոնագրված հաստատությունները համապատասխանեն առողջության և անվտանգության սահմանված չափանիշներին՝ այդ նպատակով վերահսկելով հաստատությունները, տրամադրելով տեխնիկական օժանդակություն և հաստատելով գործընկերային հարաբերություններ ծառայություն մատուցողների, ծնողների և երեխաների խնամքի համայնքի հետ:

2. Լոս Անջելեսի Շրջանի Սպառողների և Բիզնեսի Հարցերի Վարչություն (DCBA)

Լոս Անջելեսի Շրջանի Սպառողների և Բիզնեսի Հարցերի Վարչությունը (Department of Consumer and Business Affairs) ծառայություններ է մատուցում սպառողներին, ձեռնարկություններին և համայնքներին կրթության, շահերի պաշտպանության և բողոքների լուծման միջոցով: DCBA-ն հնարավորություն է տալիս փոքր բիզնեսներին պետական պայմանագրեր կնքել և հավաստագրեր է տալիս տեղական փոքր բիզնեսներին: DCBA-ի Small Business Concierge-ը «մեկ պատուհանի» սկզբունքով կենտրոնացված ծառայություններ է մատուցում ձեռնարկատերերին՝ օգնելու նրանց հաջողակ փոքր բիզնես սկսել Լոս Անջելելսի Շրջանում:

3. Լոս Անջելեսի Շրջանի Տնտեսական Զարգացման Վարչություն (DEO)

Լոս Անջելեսի Շրջանի Տնտեսական Զարգացման Վարչությունը (Department of Economic Opportunity) անվճար տրամադրում է անհատական խորհրդատվություն՝ ներառյալ սեմինարներ, իրավական օգնության ուղղորդումներ, դրամաշնորհային հնարավորություններ և այլն, որի նպատակն է օգնել բնակիչներին սկսել, շահագործել և հավաստագրել իրենց փոքր բիզնեսը:

4. Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչություն (Հրշեջ Վարչություն)

Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչությունը (Fire Department) գնահատում է երեխաների խնամքի հաստատությունները, որպեսզի դրանք համապատասխանեն հրդեհային անվտանգության չափանիշներին և վերացվեն կյանքին, շրջակա միջավայրին և գույքին սպառնացող վտանգավոր պայմանները. սա սա ներառում է ապահովելը, որ մաքուր ու ազատ լինեն երեխաների խնամքի հաստատությունների և ներսը (օր.՝ տուն և ավտոտնակ), և դուրսը (օր.՝ կանաչապատ տարածք):

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

COUNTY OF LOS ANGELES
OFFICE FOR THE ADVANCEMENT OF EARLY CARE AND EDUCATION

5. Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն, Վաղ տարիքում խնամքի և կրթության զարգացման գրասենյակ (OAECE)

Վաղ տարիքում խնամքի և կրթության զարգացման գրասենյակը (The Office for the Advancement of Early Care and Education) մշակում է քաղաքականության առաջարկներ, հեշտացնում է նախագծումը և տրամադրում է ծառայությունների լայն շրջանակ, որոնք ուղղված են վաղ խնամքի և կրթության ծրագրերի մատչելիությանը և որակի բարձրացմանը: OAECE-ն աջակցում է ջանքերին՝ խրախուսելու նախադպրոցական խնամքի և կրթության ծառայությունների ընտրության հարցում ծնողների տեղեկացված լինելը և այս ծառայություններում ծնողների բովանդակալից ներգրավվածությունը: Եվ վերջապես, OAECE-ն աշխատում է տարբեր ոլորտներում՝ նպաստելու համար, որ ընտանիքներին հասանելի լինի այն հատուկ աջակցությունը, որի կարիքն ունեն:

Public Works
LOS ANGELES COUNTY

6. Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքների Վարչություն, Շինարարության և անվտանգության բաժին (Շինարարություն և Անվտանգություն)

Լոս Անջելեսի Շրջանի Շինարարության և անվտանգության բաժինը (Los Angeles County Department of Public Works, Building & Safety Division) ծառայություններ է մատուցում՝ ապահովելու համար շինությունների անվտանգ կառուցվածքն ու շինարարությունը, շինարարական ավարտված նախագծերի հաստատումն ու կանոնների կիրառումը: Շինարարության և անվտանգության բաժնի ծառայությունները ներառում են՝ շինարարության թույլտվության տրամադրում, մասնավոր անձանց և համայնքի սեփականություն համարվող շինությունների և կառույցների կառուցվածքի, շինարարության, սարքավորման, քանդելու և պահպանման աշխատանքների ստուգում և վերահսկում՝ Շրջանի շինարարական կանոնների ու կանոնակարգերի կիրառման միջոցով: Շինարարության և անվտանգության բաժինը տրամադրում է ծառայություններ Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված տարածքներում (unincorporated areas), ինչպես նաև հետևյալ քաղաքներում՝ Արտեզիա, Քարսոն, Սերիտոս, Ինդուսթրի, Ըրվինդեյլ, Լա Քանյադա Ֆլինթրիջ, Լեյքվուդ, Լա Միրադա, Լոանդեյլ, Լոմիտա, Ռոլինք Հիլս, Ռոլինք Հիլս Էսթեյթ, Սանտա Ֆե Սփրինգս և Ուեսթլեյք Վիլիջ:

LA COUNTY
PLANNING

7. Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Նախագծման Վարչություն (Տարածքային Նախագծում)

Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Նախագծման Վարչությունը (Los Angeles County Department of Regional Planning) իրականացնում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված (unincorporated) տարածքներում հողատարածքների օգտագործումը ծրագրելու բոլոր գործառույթները: Տարածքային Նախագծման Վարչության ծառայությունները ներառում են՝ երկարաժամկետ նախագծերի կազմում, հողատարածքների կառուցապատման խորհրդատվություն, նախագծի/գործի ընդունում և վարում, շրջակա միջավայրի ստուգում, տարածքների գոտիավորման օրենքների կիրառում Լոս Անջելեսի Շրջանի յուրաքանչյուր չընդգրկված համայնքում (unincorporated areas):

AMERICA'S SBDC

8. ԱՄՆ Փոքր բիզնեսի ասոցիացիա, փոքր բիզնեսի զարգացման կենտրոններ (SBDCs)

Փոքր բիզնեսի զարգացման կենտրոնները (Small Business Development Centers) խորհրդատվություն և ուսուցում են տրամադրում փոքր բիզնեսի ներկայացուցիչներին՝ ներառյալ փոքր բիզնեսի վարչակազմի հետ աշխատելով, որպեսզի սկսնակ ձեռնարկություններին և առկա բիզնեսը ընդլայնելուն աջակցելու համար մշակեն և տրամադրեն տեղեկատվական գործիքներ:

Հիմնական աղբյուրներ

1. Երեխաների խնամքի ընդհանուր աղբյուրներ

ա. **Կալիֆորնիայի Երեխաների խնամքի աղբյուրների և ուղղորդումների ցանց (California Child Care Resource and Referral Network)** երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին օժանդակում է՝ հասկանալու նահանգում երեխաների կարիքները, զարգացնելու բիզնեսների և կառավարության հետ համագործակցությունը և արձագանքելու փոփոխվող տնտեսական, սոցիալական և ընտանեկան կարիքներին: Կալիֆորնիայի բոլոր 58 շրջանները, ներառյալ Լոս Անջելեսի Շրջանը, ունեն տեղեկատու գործակալություններ, և դրանց ծառայություններն անվճար են ու հասանելի բոլոր ծնողներին և երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին:

բ. **Լոս Անջելեսի Երեխաների խնամքի միություն (Child Care Aliacne of Los Angeles (CCALA)),** որը նաև հայտնի է որպես Alliance (Միություն), եզակի և նշանակալի գործընկերություն է 10 գործակալությունների միջև, որոնք տեղական մակարդակում ծառայում են համայնքներին: 1997թ.-ին հիմնված միության գործակալությունները Լոս Անջելեսի Շրջանում ծառայություններ են մատուցում հազարավոր ընտանիքների և երեխաների խնամքով զբաղվողների: Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները կարող են կապ հաստատել իրենց տեղական աղբյուրների ու ուղղորդումների և այլընտրանքային վճարման գործակալությունների հետ CCALA-ի կայքի միջոցով:

2. **Ֆինանսական ծրագրավորման աղբյուրներ. աղբյուրները տես այս ձեռնարկի վերջում գտնվող «Աղբյուրների տեղեկատուում»:**

3. **Իրավաբանական գործակալություններ՝ անվճար**

ա. **Երեխաների խնամքի իրավաբանական կենտրոն (Child Care Law Center)** օրենսդրության, հանրային աջակցության և դատերի միջոցով կենտրոնանում է ցածր եկամուտներով ընտանիքների համար մատչելի երեխաների խնամքը ավելացնելու, երեխաների խնամքի ծառայություններ մատուցողների արդար վարձատրության, հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների վրա: Երեխաների խնամքի իրավաբանական կենտրոնը երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին տրամադրում տեղեկատու գրքեր և անվճար իրավաբանական խորհրդատվություն:

բ. **Հանրային փաստաբանը (Public Counsel)** երկրի խոշորագույն անվճար իրավաբանական ծառայություններ մատուցողն է, որն օգտագործում է իրավական նորարարական մոդել՝ խթանելով արդարադատությունը, հույսը և հնարավորությունները ցածր եկամուտ ունեցող և ոչ սպիտակամորթ համայնքներում: Հանրային Փաստաբանի Վաղ տարիքում խնամքի և կրթության իրավունքի բաժինը երեխաների խնամքով զբաղվողներին անվճար իրավաբանական ծառայություններ մատուցող միակ կառույցն է Լոս Անջելեսի Շրջանում: Ծրագրի նպատակն է պահպանել և ավելացնել երեխաների որակյալ վաղ տարիքում խնամքի ու կրթության մատուցումը Լոս Անջելեսի Շրջանում՝ օգնելով ծառայություն մատուցողներին հաղթահարել երեխաների խնամքի ծրագրերի բացման և դրանց աշխատեցնելու հետ կապված խոչընդոտները:

Կանոնակարգեր

1. Կալիֆորնիա

ա. Կալիֆորնիայի Օրենսգիրք, Հոդված 22, Բաժին 12, Գլուխ 1(«Երեխաների խնամքի կենտրոն») կամ Գլուխ 3 («Երեխաների ընտանեկան խնամքի տներ»): Կալիֆորնիայի սոցիալական ծառայությունների Վարչության Համայնքային խնամքի արտոնագրման բաժինը վերահսկում է արտոնագրություն ունեցող երեխաների խնամքի կենտրոնները և երեխաների ընտանեկան խնամքի տները[20]՝ կիրառելով վերոնշյալ կանոնները: Այս դրույթները սահմանում են Համայնքային խնամքի արտոնագրման բաժնի կանոնները, որոնց պետք է հետևեն երեխաների ընտանեկան խնամքի տները և երեխաների խնամքի կենտրոնները՝ երեխաների խնամքի արտոնագիր ստանալու և այն ուժի մեջ պահելու համար[21]:

1. **Լոս Անջելեսի Շրջան**

Խնդրում ենք ստուգել **«Երեխաների խնամք բոլորի համար. ինչպես կառուցել և վերանորոգել Լոս Անջելեսի Շրջանի վաղ տարիքում խնամքի և կրթության հաստատությունները»**, որպեսզի լրացուցիչ տեղեկություններ ստանանք այն կանոնների մասին, որոնք վերաբերում են Լոս Անջելեսի Շրջանում երեխաների խնամքի հաստատությունների կառուցմանն ու վերանորոգմանը:

[20] Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչություն, երեխաների խնամքի արտոնագրում (2023), https://www.cdss.ca.gov/inforesources/child-care-licensing (վերջին այցը՝ 2023թ-ի օգոստոսի 1-ին):

[21] Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների, Օրենքների և կանոնակարգերի բաժին (2023), https://www.cdss.ca.gov/inforesources/community-care/policy/laws-and-regulations (վերջին այցը՝ 2023թ-ի օգոստոսի 1-ին):

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ՏՆԵՐ 13

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնմանն ուղղված հարցեր 15

1. Արտոնագրում 15
   - CCLD կանոնակարգեր նոր տարիքային խմբի սպասարկման և արտոնագրված կարողությունների ավելացման համար 16
2. Հարաբերակցությունը. երեխա-խնամող 17-18
3. Անձնակազմի որակավորում 19
4. Սարքավորումներ 20
5. Ֆիզիկական տարածության մեջ փոփոխություններ 21
   - Ներս/Դուրս 21
   - Վերանորոգում/Շինարարություն 22
6. Ֆինանսական բիզնես մոդել 23
   - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնմամանկան հետ կապված մեկանգամյա ծախսեր 23
   - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված միանգամյա ծախսերի մոտավոր բյուջե 24
   - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսեր 26
   - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսերի մոտավոր բյուջե 27
   - Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված եկամուտներ 28
7. Ընտանիքների իրազեկում 29-30

Նկատառումներ՝ կապված նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններն ընդլայնելու հետ

Այս բաժնում երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին տեղեկություններ են տրվում հետևյալ **7 հիմնական ոլորտների** մասին, որոնք կապված են նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ: Այս ոլորտներն ընգրում են՝

7 հիմնական ոլորտները

1. ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄ
2. ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ԽՆԱՄՈՂ
3. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
4. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ
5. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՈՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ
7. ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ

1 ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄ

Սույն բաժնում նկարագրվում են արտոնագրման համար տարիքային խմբերին և կարողություններին վերաբերող պահանջները: Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին, որոնք մտածում են նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունները ընդլայնելու մասին, գուցե անհրաժեշտ լինի տեղեկացնել CCLD-ին և ստանալ համաձայնություն, եթե ցանկանում են կատարել հետևյալ փոփոխությունները.

Սպասարկվող երեխաների **տարիքային խումբը**,

Երեխաների խնամքի հաստատության **արտոնագված կարողությունների**[22] աճ (երեխաների առավելագույն թիվը, որոնց երեխաների խնամքի հաստատությունը կարող է սպասարկել)

[22] ԿԱԼ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, Հոդված 22, § 102352(c)(2) (2009):

1 ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄ (շարունակություն)

CCLD-ի կանոնակարգեր նոր տարիքային խումբ սպասարկելու և արտոնագրված կարողությունը ավելացնելու վերաբերյալ

Աշխատել նոր տարիքային խմբի հետ

Եթե երեխաների ընտանեկան խնամքի տունը պատրաստվում է սպասարկել նոր տարիքային խումբ, օրինակ՝ ավելացնելով մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններ՝ չգերազանցելով թույլատրված կարողությունը, ապա չի պահանջվում երեխաների խնամքի ծառայություններ մատուցելու նոր արտոնագիր, և ծառայություններ մատուցողը կարիք չունի CCLD-ին տեղեկացնել նոր տարիքային խմբի ծառայության մասին:

Աշխատել ավելի շատ նորածինների / մանկահասակ երեխաների հետ

Եթե երեխաների ընտանեկան խնամքի փոքր տունը պատրաստվում է գերազանցել է իր արտոնագրված կարողությունը՝ ավելացնելով նոր տարիքային խումբ, ապա խնամքի ծառայություններ մատուցողը պետք է տեղափոխվի երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն: Երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն դառնալու համար խնամքի ծառայություններ մատուցողը պետք է ներկայացնի LIC 279 ձևաթուղթ CCLD- և «դիմումի տեսակը» դաշտում ընտրի “Capacity Change” («Կարողության փոփոխություն») տարբերակը:

Օրինակ՝ եթե մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններ մատուցողը, որն արտոնագրություն ունի 6 երեխաների խնամքի համար, ցանկանում է 3-ով ավելացնել խնամվող մանկահասակ երեխաների թիվը, դա կգերազանցի երեխաների խնամքի տան արտոնագրված կարողությունը: Լրացուցիչ 3 մանկահասակ երեխաների սպասարկելու համար երեխաների ընտանեկան խնամքի փոքր տան ծառայություններ մատուցողը պետք է ներկայացնի LIC 279 ձևաթուղթ, որպեսզի ընդլայնի իրենց կարողությունը՝ դառնալով երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն:

Կարողության փոփոխման վճարը $25 է: Խնդրում ենք նկատի ունենալ, որ երեխաների ընտանեկան խնամքի մեծ տան արտոնագիր ստանալու համար երեխաների խնամքի ծառայություններ մատուցողը պետք է ապացույցներ ներկայացնի այն մասին, որ նա երեխաների ընտանեկան խնամքի փոքր տանն առնվազն 1 տարվա փորձ ունի կամ ունի արտոնագրված երեխաների խնամքի կենտրոնում աշխատելու 1 տարվա աշխատանքային փորձ՝ որպես վարչական աշխատող, տնօրեն կամ ուսուցիչ[23]: Երեխաների ընտանեկան խնամքի մեծ տների ծառայություններ մատուցողները պետք է վճարեն արտոնագրման ավելի բարձր տարեկան վճարներ, քան երեխաների ընտանեկան խնամքի փոքր տների ծառայություններ մատուցողները (ներկայումս տարեկան $140՝ փոխարեն երեխաների ընտանեկան խնամքի փոքր տան տարեկան $73-ի)[24]:

Երեխաների խնամք վարձակալած տանը

Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները, ովքեր վարձակալում են իրենց բնակարանները, պետք է իրենց տանտիրոջը տեղեկացնեն երեխաների ընտանեկան խնամքի փոքր տունը մեծով փոխարինելու մասին: Խնամքի ծառայություններ մատուցողները պետք է նաև ստանան իրենց տանտիրոջ թույլտվությունը, եթե նրանք խնամում են ավելի քան 6 և մինչև 8 երեխա՝ երեխաների ընտանեկան խնամքի փոքր տան արտոնագրով, կամ ավելի քան 12 և մինչև 14 երեխա՝ երեխաների ընտանեկան խնամքի մեծ տուն արտաոնագրով[25]:

[23] Տես նույն տեղում § 102369(b)(5):

[24] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA HEALTH & SAFETY CODE) § 1596.803(a)(1) (Դիրինգ 2023) և 1596.803(b)(1)(c) (Դիրինգ 2023):

[25] ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA HEALTH & SAFETY CODE), Հոդված 22, § 102417(q)(2009):

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ԽՆԱՄՈՂ

Այս բաժնում նկարագրվում են CCLD-ի պահանջները, որոնք վերաբերում են երեխաների ընտանեկան խնամքի տանը երեխա-խնամող[26] հարաբերակցությանը: Խնամքի տներում երեխա-խնամող հարաբերակցությունը կախված է տանը գտնվող երեխաների թվից, ինչպես նաև նրանց տարիքից:

1 խնամողը կարող է սպասարկել մինչև 6 երեխա

1 խնամող ունեցող երեխաների ընտանեկան խնամքի փոքր տունը կարող է խնամել՝

առավելագույնը 4 նորածին

առավելագույնը 4 նորածնի, եթե երեխաների խնամքի հաստատությունում այլ երեխաներ չկան[27]

ԿԱՄ



առավելագույնը 3 նորածին և 2-ից բարձր տարիքի 3 երեխա

մինչև 6 երեխայի,
եթե 3-ից ավելի նորածին չկա,
իսկ մնացած 3 երեխաները 2 տարեկանից մեծ են

1 խնամողը կարող է սպասարկել մինչև 8 երեխա



առավելագույնը 2 նորածին

մինչև 8 երեխայի, եթե երեխաներից ոչ ավելի քան 2-ն են նորածիններ

ԵՎ

Առնվազն 1 երեխա ընդունվել է կամ հաճախում է ՏԿ/Կ/ տարրական դպրոց

1 երեխա,
որն առնվազն 6 տարեկան է

առնվազն 1 երեխա ընդունվել է կամ հաճախում է անցումային անկապարեզ /մանկապարտեզ կամ տարրական դպրոցում, իսկ երկրորդ երեխան առնվազն 6 տարեկան է:

Բացի այդ, եթե 8 երեխայի խնամքով զբաղվում է մեկ խնամող, ապա այդ խնամողը պետք է ծնողներից յուրաքանչյուրին տեղեկացնի, որ հաստատությունում կա ևս երկու դպրոցահասակ երեխա, և որ տանը միաժամանակ կարող է լինել մինչև 8 երեխա:

[26] «Խնամող» տերմինը, որն օգտագործվում է այստեղ, նշանակում է երեխաների խնամքի արտոնագրություն ունեցող կամ նրան փոխարինող չափահաս:

[27] ԿԱԼ. ՕՐԵՆՍԳԻՐՔ (CALIFORNIA CODE REGS.), Հոդված 22, § 102416.5(b) (2009):

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ԽՆԱՄՈՂ (շարունակություն)

1 խնամողը և 1 օգնականը խնամում են 9-12 երեխաների

1 խնամող և 1 օգնական ունեցող երեխաների ընտանեկան խնամքի մեծ տունը կարող է խնամել՝



առավելագույնը 4 նորածին

մինչև 12 երեխայի, եթե նորածինները 4-ից ավելի չեն[28]

1 խնամողը և 1 օգնականը խնամում են 13-14 երեխաների

առավելագույնը 3 նորածին

առնվազն 1 երեխա ընդունված է կամ հաճախում է ՏԿ/Կ/տարրական դպրոց

1 երեխա, որն առնվազն 6 տարեկան է

մինչև 13-14 երեխայի, եթե

երեխաներից ոչ ավելի քան 3-ն են նորածիններ

ԵՎ

առնվազն 1 երեխա պետք է ընդունված լինի կամ հաճախի անցումային մանկապարտեզ/մանկապարտեզ կամ տարրական դպրոց

ԵՎ

երկրորդ երեխան պետք է լինի առնվազն 6 տարեկան:

Բացի այդ, եթե 1 խնամող և 1 օգնական խնամում են 13 կամ 14 երեխայի, ապա այդ խնամողը պետք է ծնողներից յուրաքանչյուրին տեղեկացնի, որ հաստատությունում գտնվում են ևս երկու դպրոցահասակ երեխա, և որ տանը միաժամանակ կարող է լինել մինչև 13 կամ 14 երեխա:

[28] Տես նույն տեղում § 102416.5(d):

3 ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Այս բաժինը նկարագրում է CCLD-ի պահանջները, որոնք վերաբերում են երեխաների ընտանեկան խնամքի տների անձնակազմի որակավորմանը: Երեխաների ընտանեկան խնամքի տներում անձնակազմի որակավորման պահանջերնը նույնն են՝ անկախ խնամվող երեխաների տարիքից. նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի համար կրթության կամ վերապատրաստման լրացուցիչ պահանջներ չկան:

Աշխատակազմ	Տարիքը, որին աշխատակիցը կարող է ծառայություն մատուցել	Պահանջվող որակավորումներ (անկախ ծառայությունը ստացողի տարիքից) Նշում. տանը պետք է ներկա լինի առնվազն 1 աշխատակից, որն ունի երեխաներին առաջին բուժօգնություն և արհեստական շնչառություն տալու դասընթացն ավարտելը փաստող ընթացքիկ քարտ (Pediatric First Aid and CPR card)
Օգնական	Տարիքային բոլոր խմբերը	Կանոնակարգում ոչինչ նշված չէ, բայց պետք է լինի 14 տարեկան կամ ավելի բարձր տարիքի[29]
Խնամող	Տարիքային բոլոր խմբերը	• Պետք է լինի 18 տարեկան կամ ավելի բարձր տարիքի[30] • Պետք է ավարտած լինի[31]՝ ◦ երեխաների առաջին բուժօգնության 4-ժամյա դասընթաց (Pediatric First Aid) ◦ երեխաների արհեստական շնչառության/առաջին բուժօգնության 4-ժամյա դասընթաց (CPR/AED) ◦ կանխարգելիչ առողջապահության և անվտանգության (Preventive Health and Safety) 8-ժամյա դասընթաց

[29]Տես նույն տեղում §102352(a)(3):
[30] Տես նույն տեղում § 102368 (c):
[31] Տես նույն տեղում § 102368(d):

4 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այս բաժնում նկարագրվում են սարքավորումներին վերաբերող CCLD-ի պահանջները երեխաների ընտանեկան խնամքի այն տների համար, որոնք դիտարկում են ընդլայնել իրենց ծառայությունները, որպեսզի սպասարկեն նորածիններին և մանկահասակ երեխաներին:

CCLD-ին սովորաբար երեխաների ընտանեկան խնամքի տներից պահանջում է ունենալ անվտանգ խաղալիքներ, խաղային սարքավորումներ և պարագաներ[32]: CCLD-ի հետևյալ հատուկ պահանջները վերաբերում են երեխաների ընտանեկան խնամքի տներում օրորոցներին, խաղավանդակներին (մանեժ) և աստիճաններին.

Սարքավորումներ. երեխաների ընտանեկան խնամքի տներ	
Սարքավորումներ	**Պահանջներ[33]**
Մեկ օրորոց կամ խաղավանդակ (մանեժ)՝ յուրաքանչյուր երեխայի համար, ով չի կարող ինքնուրույն դուրս գալ օրորոցից / խաղավանդակից 	• Պետք է համապատասխանի ԱՄՆ-ի սպառողական ապրանքների անվտանգության հանձնաժողովի (US Consumer Product Safety Commission) անվտանգության չափանիշներին • Ներքնակները պետք է լինեն ամուր, ճիշտ չափերի, որպեսզի հարմարեցվեն օրորոցին /խաղավանդակին, և ծածկվեն ներքնակի չափերին համապատասխան սավանով • Պետք է ամրացված չլինի առարկաների • Ոչ մի կողային պաշտպանիչ բարձ կամ իրեր, որոնք կախված են օրորոցի վերևում կամ կցված են օրորոցի կողքին
Սանդուղք 	• Պատնեշ կամ արգելապատ աստիճանների վերևում և ներքևում

[32] Տես նույն տեղում § 102417(d):

[33] Տես նույն տեղում §§ 102415(a)-(b) և §102417(c) (3):

5 ՖԻԶԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնարավոր է, որ երեխաների ընտանեկան խնամքի տները կարիք ունենան փոխոխելու իրենց հաստատության ֆիզիկական տարածքը՝ լրացուցիչ նորածիններին և/կամ մանկահասակ երեխաներին հարմարեցնելու համար: Այս բաժինը նկարագրում է այն հարցերը, որոնք պետք է հաշվի առնվեն երեխաների խնամքի տան ֆիզիկական տարածքում փոփոխություններ կատարելիս:

Ներս/Դուրս

Նորածինների և մանկահասակների խնամքի ծառայությունների ընդլայնումը դիտարկելիս կարևոր է գնահատել երեխաների խնամքի հաստատության ներքին և արտաքին տարածքը:

Կարող է անհրաժեշտ լինել տարածք՝ նորածինների/մանկահասակ երեխաների համար սարքավորումներ և պարագաներ տեղադրելու համար (օրինակ՝ կերակրման աթոռներ, տակդիրները փոխելու սեղաններ/լոգանքի պարագաներ և լվացարաններ, օրորոցներ և ճոճանակներ)[34]:

Երբ երեխան հիվանդության նշաններ է ցույց տալիս, նա պետք է մեկուսացվի մյուս երեխաներից, և պետք է որոշվի հիվանդության բնույթը: Եթե հիվանդությունը կարող է վարակել մյուսներին, ապա երեխան պետք է մեկուսացվի մյուս երեխաներից մինչև վարակիչ փուլի ավարտը[35]:

Նախքան երեխաների խնամքի տանը կամ տարածքում փոփոխություններ կամ ավելացումներ կատարելը, երեխաների խնամքի ծառայություններ մատուցողը պետք է տեղեկացնի CCLD-ին նախատեսվող փոփոխության մասին:

[34] Տես նույն տեղում § 101439(b)
[35] Տես նույն տեղում § 102417(e):

5 ՖԻԶԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

Վերանորոգում/Շինարարություն

Նորածիններին և մանկահասակ երեխաներին սպասարկելու համար գոյություն ունեցող մանկական խնամքի հաստատության վերանորոգումը կամ ընդլայնումը պահանջում է ֆինանսական և բիզնես պլանավորում, այդ թվում՝

Կազմել վերանորոգման բյուջե

Կարևոր է կազմել նախագծի մանրամասն բյուջե, որը կընդգրկի նախատեսված վերանորոգումների հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում՝ հումքի, վերանորոգման թիմ վարձելու և շինարարության թույլտվությունները ծախսերը:

Ստուգել վերանորոգման/շինարարության նախագիծը և ստեղծել ժամանակացույց

Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները պետք է կապ հաստատեն իրենց տեղական իրավասության շրջանի Նախագծման, Շինարարության և անվտանգության և Հրդեհի վարչությունների հետ, ինչպես նաև CCLD-ի հետ՝ որոշելու համար, թե արդյոք իրենց վերանորոգման և/կամ շինարարության ծրագրերը պահանջում են ստուգում և հաստատում, և եթե այո, ապա քննարկեն և կազմեն վերանորոգման/կառուցման ժամկետները՝ համապատասխան ժամանակացույցով:

Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված (unincorporated) տարածքներում և որոշ քաղաքներում աշխատող երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները կարող են դիմել հետևյալ 4 ծառայություններին.

1. Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Նախագծման Վարչություն (Տարածքային նախագծում)
2. Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքների Վարչություն, Շինարարության և անվտանգության բաժին (Շինարարություն և անվտանգություն)
3. Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչություն
4. Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչություն, Համայնքային խնամքի արտոնագրման բաժին (CCLD)

Երեխաների խնամք բոլորի համար. «Ինչպես կառուցել և վերանորոգել Լոս Անջելեսի Շրջանի նախադպրոցական խնամքի և կրթության հաստատությունները» ձեռնարկ է, որն օգնում է Լոս **Անջելեսի Շրջանի չընդգրկված (unincorporated) տարածքներում** և **որոշ քաղաքներում** երեխաների խնամքի խառայություններ մատուցողին կողմնորոշվել, թե ինչպես սկսել երեխաների խնամքի հաստատությունների վերակառուցման/շինարարության հաստատման գործընթացը:



Նախատեսեք երեխաների խնամքի հաստատությունների վրա հնարավոր հետևանքները, այդ թվում՝ հաստատության ժամանակավոր տեղափոխում շինարարության ընթացքում:

6 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ

Այս բաժինը նկարագրում է այն գործիքները, որոնց միջոցով նորածինների և (կամ) մանկահասակ երեխաների ծառայություններն ընդլայնելու համար երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները կարող են թարմացնել իրենց ֆինանսական բիզնեսի մոդելները, ներառյալ՝ 1) մեկանգամյա և պարբերական ծախսեր և եկամտի աղբյուրներ, 2) մոտավոր բյուջեներ[36] և 3) ֆինանսական պլանավորման աղբյուրներ: Ֆինանսական պլանավորումը կարող է հոգնեցուցիչ լինել և ծանր թվալ, բայց դա անհրաժեշտ է երեխաների խնամքի ծրագիրը հաջողությամբ աշխատեցնելու համար:

Որոշելու համար, թե արդյոք նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններ մատուցելը ֆինանսական տեսանկյունից իմաստ ունի, ծառայություններ մատուցողները պետք է հաշվի առնեն մի քանի գործոններ, ինչպիսիք են՝ որքան եկամուտ է անհրաժեշտ ծախսերը հոգալու և պահուստային գումար կուտակելու համար:

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսեր

Մեկանգամյա ծախսերը մեկ անգամ կամ ոչ հաճախ արվող ծախսեր են: Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսերի օրինակներից են՝

Մեկանգամյա ծախսեր	Օրինակներ
Վերակառուցում և/կամ շինարարություն	Հաստատության ֆիզիկական տարածության փոփոխությունները
Սարքավորումներ, կահույք, պարագաներ	Մանկական օրորոցներ և խաղավանդակներ, պատնեշներ, կրթական նյութեր և այլն:
Վարչական	Արտոնագրման վճարներ, մասնագիտական որակավորման բարձրացում և այլն
Գովազդ	Թռուցիկներ, կայքէջ և այլն



[36] Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ընդլայնումը կարող է հանգեցնել նոր մեկանգամյա և պարբերական ծախսերի, ուստի կարող է օգտակար լինել այդ ծախսերը հաշվի առնելը մոտավոր բյուջեում: Սույն բաժինը ներառում է մեկանգամյա ծախսերի, պարբերաբար կատարվող ծախսերի և եկամուտների համար նախատեսված բյուջեների օրինակները:

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսերի բյուջեի օրինակ

Մեկանգամյա ծախսերի բյուջե	
Մեկանգամյա ծախսեր	**Գումար**
Վերակառուցում և/կամ շինարարություն • Թույլտվությունների ձեռք բերում • Կապալառուներ (պայմանագրով աշխատողներ) • Նյութեր	
Սարքավորումներ, կահույք, պարագաներ • Օրորոցներ և խաղավանդակներ • Կրթական նյութեր • Տակդիրներ և թաց անձեռոցիկներ	
Վարչական • Արտոնագրման վճարներ • Մասնագիտական որակի բարձրացում	
Գովազդ • Այցեքարտեր • Թռուցիկներ • Կայքէջեր	
Ընդհանուր ծախսեր	



6 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ (շարունակություն)

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների հետ կապված ընթացիկ ծախսեր

Ընթացիկ ծախսերն այն ծախսեր են, որոնք արվում են շարունակաբար:
Նման ընթացիկ ծախսերի օրինակները ներառում են՝

Ընթացիկ ծախսեր	Օրինակներ
Աշխատակազմ	Տնօրեն, խնամող/ լիովին որակավորված ուսուցիչ, ուսուցիչ, ուսուցչի օգնական, խոհարար, փոխարինող ուսուցիչ / օգնական
Աշխատակիցներին տրվող նպաստներ	Առողջության ապահովագրության, աշխատողների փոխհատուցում, արձակուրդային և հիվանդության ժամեր
Սարքավորումներ և պարագաներ	Դպրոցական պարագաներ և գրենական պիտույքներ
Կենցաղային ծառայություններ	Ջեռուցում / օդորոկում, էլեկտրականություն, գազ, հեռախոս, ինտերնետ
Վարչական	Վարձակալություն, պատասխանատվության ապահովագրություն (liability insurance), միության անդամավճարներ, հաշվապահական և իրավաբանական ծառայությունների ծախսեր
Փոխադրամիջոցներ (եթե կիրառելի է)	Ավտոմեքենաներ/փոքր ավտոբուսներ, վառելանյութ

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսերի բյուջեի օրինակ

Ծախսեր	Ամսական	Տարեկան ընդհանուր
Աշխատակազմ		
Տնօրեն/տեղամասի ղեկավար/ երեխաների խնամքի կենտրոնի սեփականատեր		
Վաղ տարիքում խնամքի և կրթության (ECE) ծառայություններ մատուցող / ուսուցիչ (#)		
Վաղ տարիքում խնամքի և կրթության ծառայություններ (ECE) մատուցող / ուսուցչի օգնական (#)		
Խոհարար		
Մաքրում/տեխնիկական սպասարկում		
Վաղ տարիքում խնամքի և կրթության ծառայություններ (ECE) մատուցող / ուսուցչի օգնական (#)		
Քարտուղար / հաշվապահ		
Փոխարինողներ (նվազագույն աշխատավարձ/ ժամում x # շաբաթական)		
Ընդհանուր աշխատավարձ		
Աշխատակիցներին տրվող նպաստներ		
Բժշկական ապահովագրություն		
Աշխատողի փոխհատուցում		
Արձակուրդային և հիվանդության ժամեր		
Ընդհանուր աշխատողների նպաստներ		
Կենցաղային ծառայություններ		
Վարձակալում		
Ջեռուցում/օդորակիչ		
Էլեկտրաէներգիա		
Գազ		
Հեռախոս		
Ինտերնետ		
Ընդհանուր կենցաղային ծառայություններ		
Սարքավորումներ և պարագաներ		
Նորածինների և/կամ մանկահասակ երեխաներին հատուկ սարքավորումներ (կերակրելու, տակդիրները փոխելու համար)		
Խոհանոցային պարագաներ		
Գրենական պիտույքներ		
Կրթական (խաղալիքներ, գրքեր, արվեստի և արհեստի պարագաներ և այլն)		

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսեր (շարունակություն)

Ծախսեր	Ամսական	Տարեկան ընդհանուր
Վարչական		
Գովազդ (թռուցիկ, գրքույկ, կայքէջ և այլն)		
Արտոնագրման վճարներ		
Պատասխանատվության ապահովագրություն (արժեք / երեխա / տարի)		
Հրատարակչությունների բաժանորդագրություն/միությունների անդամակցություն		
Մասնագիտական զարգացում (առաջին օգնության ցուցաբերում, անձնակազմի գնահատանք և այլն)		
Աուդիտ (ստուգումներ)		
Ընհանուր վարչական		
Փոխադրամիջոց		
Ավտոմեքենաներ/փոքր ավտոբուսներ (սպասարկում, վառելանյութ և այլն)		
Էքսկուրսիաներ/ ճամփորդություններ		
Ընդհանուր փոխադրամիջոցների		

6 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ (շարունակություն)

Երեխաների խնամքի ծրագրի մեկանգամյա և պարբերական ծախսերը հաշվարկելուց հետո հաջորդ քայլը պարզելն է, թե ինչ եկամուտներ են անհրաժեշտ երեխաների խնամքի ծրագրի ծախսերը հոգալու և պահուստային դրամ հավաքելու համար:

Եկամուտները կարող են կուտակվել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝

1) Երեխաների խնամքի վճարները, որոնք վճարում են ընտանիքներն իրենց սեփական գրպանից

2) Կառավարության փոխհատուցումները (սուբսիդիաներ), որոնք փակում են որոշ ընտանիքների երեխաների խնամքի վճարները

3) Այլ աղբյուրներ, օրինակ՝ դրամաշնորհներ

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված եկամուտներ

Գրանցում

- Որոշեք երեխաների թիվը՝ ըստ տարիքային խմբերի, որոնք սպասարկվելու են
  Առաջարկ. հաշվարկեք եկամուտը՝ օգտագործելով տարեկան գրանցումների մոտավորապես 75-90%-ը:

Սակագներ

- Արդյո՞ք ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր երեխայի համար կգանձվի անփոփոխ շաբաթական կամ ամսական վճար, թե՞ կգանձվի ժամավճար:
- Արդյո՞ք ծրագրի շրջանակներում 3-ժամյա խնամքի համար կգանձվի ժամավճար (օրինակ՝ կես դրույքով խնամք, թե լրիվ դրույքով խնամքի)
- Արդյո՞ք ծրագիրը քույր-եղբայրների համար կտրամադրի «մի քանի երեխաների զեղչ»:

Երեխաների խնամքի վճարներ

- Արդյո՞ք ծրագրի շրջանակներում երեխաների խնամքի համար տարբեր վճարներ կգանձվեն՝ կախված տարիքային խմբից:

Գրանցման վճարներ

- Արդյո՞ք ծրագիրը գումար է գանձում:
- Եթե այո, ապա որքա՞ն հաճախ:
- Մեկ ընտանիքի՞, թե՞ մեկ երեխայի համար:

Փոխադրամիջոցի վճարներ

- Փոխադրամիջոց տրամադրելու դեպքում արդյո՞ք ծրագիրը կգանձի փոխադրամիջոցի վարձավճար:

7 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Այս բաժնում նկարագրվում է ընտանիքների իրազեկման աշխատանքը, ինչը ևս մեկ կարևոր նկատառում է՝ կապված նորածինների և մանկահասակ երեխաների համար ծառայությունների ընդլայնման հետ: Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները իրականացնում են իրազեկման միջոցառումներ՝ նոր ընտանիքներին և համայնքներին իրենց երեխաների խնամքի ծառայությունների մասին տեղեկացնելու համար:

Այս բաժնում նկարագրվում է՝

1) Տեղեկություններ, որոնք ընտանիքները ցանկանում են իմանալ
2) Իրազեկման տարբեր եղանակներ

Տեղեկատվություն

Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները գուցե ցանկանան պարզաբանել այս նպաստների տեսակները[37], որոնք նախատեսված են իրենց ծրագրերով.

- Երեխայի զարգացման հետ կապված օգուտները, ինչպիսիք են սոցիալ-հուզական, ճանաչողական, լեզվական և շարժական զարգացումը[38]
- Հուսալի խնամք աշխատող ընտանիքների համար
- Ճկուն աշխատանքային ժամեր
- Մնունդ և նախուտեստներ (եթե կիրառելի է)
- Մատչելի գներ
- Որակավորված աշխատակազմ
- Երեխաների համար նախատեսված հատուկ միջոցառումներ՝ ըստ տարիքի
- Տարիքին համապատասխան խաղալիքներ և ուսումնական ծրագրեր

[37] Հիշեք, որ ծառայություններ մատուցողի ծառայությունների առավելությունների մասին հաղորդագրությունների միևնույն ձևը կարող է չաշխատել բոլոր ընտանիքների դեպքում:

[38] Zero to Three; Why 0 to 3? (2023), https://www.zerotothree.org/why-0-3/ (վերջին այցը 2023՝ թվականի օգոստոսի 1-ին); Լոս Անջելեսի երեխաների խնամքի միություն. «Որակյալ երեխաների խնամքի ընտրություն (2023), https://www.ccala.net/connect-to-child-care/choosing-quality-child-care/ (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

7 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ (շարունակություն)

Իրազեկման եղանակներ

Նորածինների և մանկահասակ երեխաների ծառայությունների մասին հանրությանը իրազեկելու բազմաթիվ եղանակներ կան, այդ թվում՝

Աղբյուրների և առաջարկների գործակալություններ (R&Rs)

- Կապ հաստատեք ձեր տեղական Աղբյուրների և ուղղորդումների գործակալության հետ՝ Երեխաների խնամքի ծրագիրը որպես առաջարկ ներառելու այն ընտանիքների համար, ովքեր փնտրում են նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններ:

Սոցիալական մեդիա և այլ տեխնոլոգիաներ

- Խթանել ծրագիրը սոցիալական ցանցերի և ծրագրի կայքէջի միջոցով (ներառել տեսանյութեր և այլն): Հնարավոր է, որ տեղական Փոքր բիզնեսի զարգացման կենտրոններն առաջարկեն անվճար մարքեթինգային աջակցություն փոքր բիզնեսի սեփականատերերին:
- Տրամադրեք QR կոդ՝ ծրագրի մասին տեղեկությունները հեշտությամբ հասանելի դարձնելու համար:

Անձամբ ծանոթություններ և տեղեկության բանավոր տարածում

- Մասնակցեք համայնքային միջոցառումներին և անձամբ գովազդեք ծրագիրը:
- Խրախուսեք ընտանիքներին ձեր ծրագրի մասին տեղեկություններ փոխանցել իրենց ընկերներին, հարազատներին և գործընկերներին:
- Տրամադրեք QR կոդ, որպեսզի սմարթֆոնների միջոցով հեշտությամբ գտնեն ծրագրի մասին տեղեկատվություն:
- Ներգրավվեք այնպիսի շրջանակներում, որոնց մեջ մտնում են հղի, վերջերս ծննդաբերած կամ վերջերս ծնող կամ խնամող դարձած մարդիկ:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ 31

- Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնմանն ուղղված հարցեր 33
- Սահմանումներ 34

☐ **1.** Արտոնագրում 34
- ○ CCLD կանոնակարգեր նոր տարիքային խմբի սպասարկման և արտոնագրված կարողությունների ավելացման համար 35

☐ **2.** Հարաբերակցություն. երեխա-ուսուցիչ և տնօրինություն 36
- ○ Տնօրինություն 36
- ○ Երեխա-ուսուցիչ 36-41

☐ **3.** Անձնակազմի որակավորում 42
- ○ Անձնակազմի որակավորման ընդհանուր պահանջներ 42
- ○ Անձնակազմի որակավորման պահանջները ուսուցչի օգնականի, ուսուցչի և լիարժեք որակավորում ունեցող ուսուցչի համար 43-44

☐ **4.** Սարքավորումներ 45-46

☐ **5.** Ֆիզիկական տարածության մեջ փոփոխություններ 47
- ○ Ներս/Դուրս 47
- ○ Վերանորոգում/Շինարարություն 48

☐ **6.** Ֆինանսական բիզնես մոդել 49
- ○ Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսեր 49
- ○ Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսերի մոտավոր բյուջե 50
- ○ Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսեր 51
- ○ Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսերի մոտավոր բյուջե 52-53
- ○ Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված եկամուտներ 54

☐ **7.** Ընտանիքների իրազեկում 55-56

Նկատառումներ՝ կապված նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններն ընդլայնելու հետ

Այս բաժնում երեխաների խնամքի կենտրոններին տրամադրվում է 7 հիմնական ոլորտների վերաբերյալ տեղեկատվություն որոնք կապված են նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ:[39]

Այս ոլորտները ներառում են՝

7 հիմնական ոլորտները

1. ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄ
2. ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
3. ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ
4. ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ
5. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ
7. ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ

[39]Այս ձեռնարկը նախատեսված չէ երեխաների խնամքի այն հաստատությունների համար, որոնք գործում են դպրոցական շրջանի վերահսկողությամբ և արտոնագրություն ունեն միայն դպրոցահասակ երեխաների սպասարկելու համար

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Համայնքային խնամքի արտոնագրման բաժինն (CCLD) օգտագործում է հետևյալ սահմանումները համայնքային խնամքի կենտրոններում խնամվող երեխաների տարիքային խմբերի համար.

Երեխա	Տարիքային խումբ
Նորածին	ծնունդ-24 ամսական
Մանկահասակ	18-36 ամսական
Նախադպրոցական տարիքի երեխա	Երեխա, որն ընդգրկված չէ ոչ նորածինների, ոչ էլ դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում

1 ԱՐՏՈՆԱԳՐՈՒՄ

Սույն բաժնում նկարագրվում են արտոնագրման համար տարիքային խմբին և կարողություններին վերաբերող պահանջները: Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին, որոնք մտածում են նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունները ընդլայնելու մասին, գուցե անհրաժեշտ լինի տեղեկացնել CCLD-ին և ստանալ համաձայնություն, եթե ցանկանում են կատարել հետևյալ փոփոխությունները.

Սպասարկվող երեխաների տարիքային խումբ՝

Երեխայի խնամքի հաստատության **արտոնագված կարողությունների աճ**[40] (երեխաների առավելագույն թիվը, որոնց երեխաների խնամքի հաստատությունը կարող է սպասարկել)

[40] ԿԱԼ.. ՕՐԵՆՍԳԻՐՔ (CAL. CODE REGS.), Հոդված 22, § 101152(c)(2) (2009)

JANUARY 1
2024

2024 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո

2024 թվականի հունվարի 1-ից արտոնագրված երեխաների խնամքի կենտրոնները կարող են մեկ արտոնագրի հիման վրա սպասարկել նորածի, մանկահասակ երեխաների, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների: Երեխաների խնամքի կենտրոնները, որոնք ցանկանում են արտոնագիր ստանալ 2024 թվականի հունվարի 2-ին կամ դրանից հետո, պետք է նշեն երեխաների տարիքային խմբերը, որոնց նրանք կսպասարկեն միասնական արտոնագրի ներքո, ներառյալ՝ նորածիններին, մանկահասակ երեխաներին, նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաներին՝ օգտագործելով երեխաների խնամքի կենտրոնի արտոնագրի ձևը LIC 200A (3/23):

CCLD-ը նախատեսում է վերափոխել մեկ միասնական արտոնագրի այն երեխաների խնամքի կենտրոնները, որոնք մինչև 2024 թվականի հունվարի 2-ը ստացել են մի քանի արտոնագիր տարբեր տարիքային խմբերի համար: Մինչ դա տեղի կունենա, երեխաների խնամքի կենտրոնները, որոնք արտոնագիր են ստացել մինչև 2024 թվականի հունվարի 2-ը, նոր տարիքային խմբի խնամելու արտոնագիր ստանալու համար պետք է դիմեն՝ օգտագործելով LIC 200A (3/23)ձևաթուղթը:

Եթե երեխաների խնամքի ծառայություններ մատուցողը ցանկանում է մեծացնել իր արտոնագրված հնարավորությունները, ապա անհրաժեշտ է դիմել երեխաների խնամքի կենտրոն (LIC 200A (3/23): Դիմումը գրելիս երեխաների խնամքի ծառայություններ մատուցողը պետք է «Requested Action»-ի («Հայցված գործողություն») «B» բաժնում նշի “Change of Capacity” («Կարողության փոփոխություն»)՝ երեխաների խնամքի կենտրոնի արտոնագրված հնարավորությունները մեծացնելու համար:

Կարողության փոփոխության համար կա $25-ի մեկանգամյա վճար[41] և եկամուտի վրա հիմնված վճար (sliding scale)՝ կախված մանկական հաստատության չափից, որը տարեկան մինչև 30 երեխա ունեցող խնամքի կենտրոնների համար սկսում է $484-ից[42]:

* Նշում նորածինների կամ նախադպրոցական գործող ծրագրում ավելացված մանկահասակ երեխաների խնամքի մասին.

Երեխաների խնամքի կենտրոնում մանկահասակ երեխաների բաժին տեղափոխված բոլոր երեխաները պետք է լինեն առնվազն 18 ամսական և կարող են տեղափոխվել մանկահասակների ծրագիր միայն երեխայի ծնողներից թույլտվություն ստանալուց հետո:[44]

Մանկահասակ երեխաները պետք է առանձնացվեն այլ տարիքային խմբերի երեխաներից, և նրանց խնամքի համար գործում է երեխ-ուսուցիչ այլ հարաբերակցություն:

Նկատառումներ



[41] ԿԱԼ. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ § 1596.803(b) (1)(c) (Դիրինգ 2023):

[42] Տես նույն տեղում § 1596.803(a)(1):

[43] Քևին Գեյնս, 2022 «Երեխաների խնամքի հաստատությունների վրա ազդող կանոնադրական օրենսդրություն» (2023), https://www.cdss.ca.gov/Portals/9/CCLD/PINs/2023/CCP/PIN-23-08-CCP.pdf (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

[44] ԿԱԼ. ՕՐԵՆՍԳԻՐՔ, Հոդված 22, § 101417(a)(1)(2009):

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Այս բաժնում նկարագրվում են CCLD-ի կանոնները, որոնք վերաբերում են երեխաների խնամքի կենտրոններում երեխա-ուսուցիչ և երեխա-վարչական աշխատող[45]: Երեխաների խնամքի կենտրոններում երեխաների և ուսուցիչների թվի հարաբերակցությունը կախված է երեխայի տարիքային խմբից (օրինակ՝ երեխան նորածին է, մանկահասակ է, նախադպրոցական կամ դպրոցական տարիքի է), ինչպես նաև երեխաների և վարչական անձնակազմի թվի հարաբերակցությունից:

Տնօրինություն

Ընդհանուր առմամբ, երեխաների խնամքի բոլոր կենտրոններում աշխատանքային ժամերին պետք է ներկա լինեն **տնօրենը ԿԱՄ նրա տեղակալը**[46]:

Երեխաների խնամքի կենտրոններում, որտեղ սպասարկում են 25 կամ ավելի նորածինների, պետք է տեղում ներկա լինեն **տնօրենը ԵՎ տնօրենի օգնականը**[47]:

Երեխա-ուսուցիչ

CCLD-ի կանոնները, որոնք վերաբերում են երեխաների խնամքի կենտրոններին, սահմանում են երեխաների և ուսուցիչների հարաբերակցությունը՝ ելնելով երեխաների տարիքային խմբերից և այն հանգամանքից, թե արդյոք անձնակազմի անդամը ուսուցչի օգնական է, ուսուցիչ, թե լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ, և թե արդյոք երեխաները քնած են, թե արթուն: Կենտրոնի անձնակազմը կարող է սպասարկել բոլոր տարիքի երեխաներին: CCLD-ն չի սահմանում երեխաների առավելագույն թիվ, որոնց կարող է սպասարկել երեխաների խնամքի կենտրոնը՝ պայմանով, որ կենտրոնը համապատասխանի CCLD-ի բոլոր պահանջներին. այն պետք է ունենա անհրաժեշտ ներքին/արտաքին տարածք, կերակրման, տակդիրները փոխելու և զուգարանի պարագաներ և անցնի հրդեհային անվտանգության ստուգում: Յուրաքանչյուր տարիքային խումբ, որը խնամվում է երեխաների խնամքի կենտրոնում, պետք է ֆիզիկապես առանձնացված լինի բոլոր մյուս տարիքային խմբերից:

45 Տես նույն տեղում § 101215.1 և § 101216.3:
46 Տես նույն տեղում § 101215.1(d):
47 Տես նույն տեղում § 101415.1(a):

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ և ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ (շարունակություն)

1. Յուրաքանչյուր տարիքային խումբ պետք է առանձնացվի մնացած բոլոր տարիքային խմբերից
2. Ստորև նշված հարաբերակցությունները վերաբերում են այն ժամանակվան, երբ երեխաներն արթուն են (հարաբերությունները փոխվում են, երբ երեխաները քնած են լինում)

Երեխայի տարիքը	#Երեխաներ	#Ուսուցիչներ և/կամ օգնականներ	Երեխա-ուսուցիչ հարաբերակ-ցություն
Նորածին (ծննդից-24 ամսական)	Մինչև 4 նորածին երեխա	1 ուսուցիչ	4:1
	Մինչև 12 նորածին երեխա	• 1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ • 2 Ուսուցչի օգնական	12:3
Մանկահասակ (18-36 ամսական)	Մինչև 6 մանկահասակ երեխա	1 Ուսուցիչ	6:1
	Մինչև 12 մանկահասակ երեխա	• 1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ • 1 ուսուցչի օգնական	12:2
Նախադպրոցական տարիքի երեխա (ընդգրկված չէ ոչ նորածինների, ոչ էլ դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում)	Մինչև 12 նախադպրոցա-կաններ	1 ուսուցիչ	12:1
	Մինչև 15 նախադպրոցա-կաններ	• 1 ուսուցիչ ԵՎ • 1 ուսուցչի օգնական	15:2
	Մինչև 18 նախադպրոցա-կաններ	• 1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ • 1 ուսուցչի օգնական	18:2

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ ԵՎ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Ցերեկային քնի ժամանակահատվածում թույլատրվում է 1 ուսուցիչ, որը վերահսկում է 24 քնած երեխաների, քանի դեռ մնացած ուսուցիչները, որոնք անհրաժեշտ են ստորև նշված աղյուսակում ընդհանուր հարաբերակցությունը բավարարելու համար, անմիջապես հասանելի են կենտրոնում:

* Նշում. եթե երեխա-ուսուցիչ հարաբերակցությունը անմիջապես հնարավոր է, ուսուցչի օգնականը կարող է ուսուցչի փոխարեն հսկել 24 քնած երեխաների[48]:

Երեխա-ուսուցիչ հարաբերակցություն. երբ երեխաները քնած են[49]			
Երեխայի տարիքը	**#Երեխաներ**	**#Ուսուցիչներ և/կամ օգնականներ**	**Երեխա-ուսուցիչ հարաբերակ-ցություն**
Նորածին (ծննդից-24 ամսական)	Մինչև 4 նորածին երեխա	1 ուսուցիչ	4:1
Մանկահասակ (18-36 ամսական)	Մինչև 6 մանկահասակ երեխա	1 ուսուցիչ	6:1
	Մինչև 12 մանկահասակ երեխա	• 1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ • 1 ուսուցչի օգնական	12:2
Նախադպրոցական տարիքի երեխա (ընդգրկված չէ ոչ նորածինների, ոչ էլ դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում)	Մինչև 12 նախադպրոցա-կաններ	1 ուսուցիչ	12:1
	Ընդհանուր առմամբ մինչև 15 նախադպրոցա-կաններ, որոշ դեպքերում՝ մինչև 18 նախադպրոցա-կան տարիքի երեխաներ	• 1 ուսուցիչ ԵՎ • 1 ուսուցչի օգնական	15:2
		• 1 ուսուցիչ ԵՎ • 1 ուսուցչի օգնական (6 կիսամյակային միավոր)	18:2

48 Տես նույն տեղում § 101230 (c):
49 Տես նույն տեղում § 101216.3 (f):

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ և ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)

ՆՈՐԱԾԻՆ (ծննդից -24 ամսական)

1 ուսուցիչ

Մինչև 4 նորածին երեխա

1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ 2 ուսուցչի օգնական

Մինչև 12 նորածին երեխա

ՄԱՆԿԱՀԱՍԱԿ ԵՐԵԽԱՆԵՐ (18-36 ամսական)

1 ուսուցիչ



Մինչև 6 մանկահասակ երեխաներ

1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ 1 ուսուցչի օգնական



Մինչև 12 մանկահասակ երեխաներ

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ և ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐ (ընդգրկված չեն ոչ նորածինների, ոչ էլ դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում)

1 ուսուցիչ

Մինչև 12 նախադպրոցականներ

1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ 1 ուսուցչի օգնական

Մինչև 15 նախադպրոցականներ

1 լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ ԵՎ 2 ուսուցչի օգնական

Մինչև 18 նախադպրոցականներ

2 ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ. ԵՐԵԽԱ-ՈՒՍՈՒՑԻՉ և ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ
(շարունակություն)

ԱՄՓՈՓՈՒՄ

Նորածիններ
(ծննդից-24 ամսական)

Մեկ ուսուցիչը կարող է միաժամանակ խնամել մինչև 4 երեխայի: Եթե կա լիարժեք որակավորում ունեցող մեկ ուսուցիչ և 2 ուսուցչի օգնական, նրանք միասին կարող են միաժամանակ խնամել 12 երեխայի:

Մանկահասակ երեխաներ
(18-36 ամսական)

Մեկ ուսուցիչը կարող է միաժամանակ խնամել մինչև 6 մանկահասակ երեխայի: Եթե կա լիարժեք որակավորում ունեցող մեկ ուսուցիչ և 1 ուսուցչի օգնական, նրանք միասին կարող են միաժամանակ խնամել 12 երեխայի:

Նախադպրոցական տարիքի երեխաներ
(ընդգրկված չէ ոչ նորածինների, ոչ էլ դպրոցահասակ երեխաների ցերեկային խնամքի կենտրոնում)

Մեկ ուսուցիչը կարող է միաժամանակ խնամել մինչև 12 նախադպրոցականի: Եթե կա լիարժեք որակավորում ունեցող մեկ ուսուցիչ և 1 ուսուցչի օգնական, նրանք միասին կարող են միաժամանակ խնամել 15 երեխայի:

1 բարձր որակավորում ունեցող ուսուցչի և 1 ուսուցչի օգնականի առկայության դեպքում նրանք միասին կարող են խնամել մինչև 18 նախադպրոցական երեխայի:

3 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

Այս բաժնում նկարագրվում են CCLD-ի պահանջները, որոնք վերաբերում են երեխաների խնամքի կենտրոններում անձնակազմի որակավորմանը:

Երեխաների խնամքի կենտրոնների համար կան անձնակազմի որակավորման ընդհանուր պահանջներ և յուրաքանչյուր պաշտոնին վերաբերող պահանջներ:

Անձնակազմի որակավորման ընդհանուր պահանջներ

- Կենտրոնում պետք է ներկա լինի առնվազն մեկ աշխատակից, ով ունի երեխաների առաջին օգնության և արհեստական շնչառության դասընթացն ավարտելը վկայող վավերական քարտ (Pediatric First Aid and CPR card):
- Անձնակազմը պետք է ունենա գիտելիքներ/հմտություններ կամ վերապատրաստվի աշխատավայրում հետևյալի վերաբերյալ՝

  - Սնունդ, ուտելիքի պատրաստում և պահպանում, ճաշացանկ կազմում:
  - Տան խնամքի և սանիտարական մաքրման սկզբունքներ
  - երեխայի խնամքի և հսկողության ապահովում
  - Դեղերի սպասարկում
  - Հիվանդության վաղ նշանների և մասնագիտական օգնության կարիքի ճանաչում, ինչպես նաև
  - Հանրային ծառայությունների և աղբյուրների առկայություն[50]

3 տեսակի աշխատակիցներ, որոնք աշխատում են անմիջապես երեխաների հետ		
Աշխատակից	**Տարիք, որին աշխատակիցը կարող է սպասարկել**	**Վերահսկում**
Ուսուցչի օգնական	Կարող է սպասարկել տարիքային բոլոր խմբերը	Պետք է միշտ աշխատի ուսուցչի ներկայությամբ (կամ լիարժեք որակավորում ունեցող ուսուցչի ներկայությամբ, եթե դա ուսուցչի օգնական է նորածինների հետ աշխատելու համար)
Ուսուցիչ	Կարող է սպասարկել բոլոր տարիքի երեխաներին (նորածինների խնամքի համար անհրաժեշտ են հատուկ երեխաների խնամքի բաժիններ)	Չի կարող վերահսկել ուսուցչի օգնականի

[50] Տես նույն տեղում § 101216(e):

3 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ (շարունակություն)

Երեխաների խնամքի կենտրոններում անձնակազմի որակավորումները տարբեր են՝ կախված զբաղեցրած պաշտոնից և այն հանգամանքից, արդյոք աշխատակիցը զբաղվում է նորածինների խնամքով[51]: Օրինակ՝ ուսուցչի օգնականի որակավորումը տարբերվում է ուսուցչի որակավորումից, ինչպես նաև լիարժեք որակավորում ունեցող ուսուցչի որակավորումից:

Ուսուցչի օգնական

- Կարող է լինել 18 տարեկանից ցածր տարիքի, եթե ավարտել է ավագ դպրոցը կամ մասնակցում է մասնագիտական ծրագրի, որը ճանաչված / հաստատված է ավագ դպրոցի կամ քոլեջի կողմից:
- Ուսուցչի օգնականը պետք է միշտ աշխատի ուսուցչի ներկայությամբ:
- Նորածինների ուսուցչի օգնականը պետք է մշտապես աշխատի տնօրենի, տնօրենի օգնականի կամ լիարժեք որակավորում ունեցող ուսուցչի ներկայությամբ:
- Սահմանափակ բացառություններ կան, երբ ուսուցչի օգնականը պետք է գործի ուսուցչի ներկայությամբ, օրինակ՝ երբ ուսուցչի օգնականը 18 տարեկան է կամ ավելի բարձր տարիքի և ուղեկցում/օգնում է երեխաներին զուգարանում կամ վերահսկում է նրանց քնելու ընթացքում:
- Եթե ուսուցչի օգնականը օգնում է լիարժեք որակավորում ունեցող ուսուցչին նախադպրոցական տարիքի 18 երեխաների վերահսկելու մեջ, ապա կիրառվում են կրթությանը վերաբերող լրացուցիչ պահանջներ:

Ուսուցիչ

- Կրթությանը վերաբերող պահանջներ ուսուցչի համար՝
  - ✔ Առաջին տարբերակ.
    - ☐ 6 կիսամյակային միավոր վաղ տարիքում կրթության (Early Childhood Education (ECE*)) կամ երեխայի զարգացման ոլորտում (Child Development (CD))

      ԵՎ
    - ☐ Կենտրոնում աշխատելիս յուրաքանչյուր կիսամյակ (կամ եռամսյակ) պետք է անցնի առնվազն 2 ECE* կամ CD դասընթաց, որպեսզի դառնա Լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ
  - ✔ Երկրորդ տարբերակ.
    - ☐ Ունի մանկական խնամքի մասնագիտություններում «Մասնագիտական տարածքային ծրագրի ուսուցման վկայական» («Regional Occupation Program Certificate of Training)

      ԵՎ
    - ☐ 95 ժամ դասընթաց մանկական խնամքի ու զարգացման և մանկական խնամքի մասնագիտություններում դասարանում

      ԵՎ
    - ☐ Առնվազն 150 ժամ՝ մանկական խնամքի արտոնագրված ծրագրում կամ հավասարազոր մանկական խնամքի խմբային ծրագրում՝ վերահսկվող աշխատանքային փորձի փոխարեն

      ԵՎ
    - ☐ Կենտրոնում աշխատելիս պետք է քոլեջում վերցնի դասեր՝ լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ դառնալու համար:

[51] Տես նույն տեղում §§ 101216.1, 101216.2, 101416.2 և 101416.3:

3 ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ (շարունակություն)

Նորածինների ուսուցիչ

■ **Կրթությանը վերաբերող պահանջներ նորածինների ուսուցչի համար.**

- ☐ 3 կիսամյակային միավոր վաղ տարիքում կրթության ոլորտում (Early Childhood Education (ECE*)) կամ երեխայի զարգացման ոլորտում (Child Development (CD))

  ԵՎ

- ☐ 3 կիսամյակային միավոր՝ կապված նորածինների խնամքի հետ

  ԵՎ

- ☐ Կենտրոնում աշխատելիս պետք է յուրաքանչյուր կիսամյակ (կամ եռամյակ) անցի առնվազն 2 ECE* կամ CD դասընթաց, որպեսզի դառնա լիարժեք որակավորում ունեցող նորածինների ուսուցիչ

Լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ

■ **Կրթությանը վերաբերող պահանջները լիարժեք որակավորում ունեցող ուսուցչի համար՝**

✔ **Առաջին տարբերակ**

- ☐ Ունի երեխայի զարգացման օգնական-ուսուցչի թույլտվություն (Child Development Associate Teacher Permit)

  ԿԱՄ

- ☐ Երեխայի զարգացման ուսուցչի թույլտվություն (Child Development Teacher Permit)

  ԿԱՄ

- ☐ Երեխայի զարգացման մագիստրոս ուսուցչի թույլտվություն (Child Development Master Teacher Permit)

✔ **Երկրորդ տարբերակ**

- ☐ 12 կիսամյակային միավոր ECE-ում* կամ CD-ում

  ԵՎ

- ☐ 6 ամսվա աշխատանքային փորձ

✔ **Երրորդ տարբերակ**

- ☐ Երեխայի զարգացման մասնագետի որակավորում՝ համապատասխան տարիքի համար

  ԵՎ

- ☐ 6 ամսվա վերապատրաստում և/կամ աշխատանքային փորձ

Նորածինների՝ լիարժեք որակավորում ունեցող ուսուցիչ

■ **Կրթությանը վերաբերող պահանջները նորածինների՝ լիարժեք որակավորում ունեցող ուսուցչի համար՝**

- ☐ 12 կիսամյակային միավոր ECE*-ում կամ CD-ում, որոնցից առնվազն 3-ը կապված են նորածինների խնամքի հետ

  ԵՎ

- ☐ 6 ամսվա փորձ արտոնագրված նորածինների խնամքի կենտրոնում կամ 5 տարեկանից ցածր երեխաների համապատասխան խմբային խնամքի ծրագրում

4 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այս բաժնում նկարագրվում են CCLD-ի՝ սարքավորումներին վերաբերող պահանջները երեխաների խնամքի այն կենտրոնների համար, որոնք դիտարկում են նորածինների և երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնումը:

Երեխաների խնամքի կենտրոնների համար կիրառվում են CCLD-ի հետևյալ հատուկ պահանջները.

Սարքավորումներ	Պահանջներ[52]
Հատակի գորգեր և օրորոցներ /մահճակալներ	**Հատակի գորգերը պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պահանջներին.** • Պատրաստված են առնվազն ¾ մատնաչափ (inch) հաստությամբ ֆոմից • Ծածկված են վինիլով / սրբելով մաքրվող նյութով • Նշված/գունավորված են, որպեսզի գորգը տարբերվի քնի համար օգտագործվող կողմից • Ախտահանող միջոցներով մաքրվեն ամեն շաբաթ կամ կեղտոտվելու/թրջվելու դեպքում • Պահպանվում են անվտանգ վիճակում՝ առանց բացվող փրփրաշերտի **Օրորոցները/մահճակալները պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պահանջներին.** • Օգտագործեք ամուր և համապատասխան ներքնակ • Օրորոց/մահճակալ օգտագործող նորածին երեխան պետք է կարողանա ուղիղ կանգնել • Ոչ մի պաշտպանիչ բարձիկ կամ գլխավերևում գտնվող շարժվող առարկաներ • Պահպանվում են անվտանգ վիճակում **Անկողնային պարագաները պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պահանջներին.** • Յուրաքանչյուր օրորոց կամ ներքնակ պետք է ծածկված լինի սավանով, իսկ կախված եղանակից՝ սավանով և/կամ վերմակով • Տարբեր երեխաներ չեն կարող օգտագործել միևնույն անկողնային պարագաները՝ առանց նախապես լվանալու • Պահվում են առանձին-առանձին • Սավանները պետք է լվացվեն ամեն շաբաթ կամ երբ կեղտոտվեն/թրջվեն, իսկ ծածկոցները պետք է մաքրվեն կամ փոխվեն, երբ դրանք կեղտոտվեն
Կերակրման աթոռներ	**Կերակրման աթոռները պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պահանջներին.** • Ունեն լայն հիմքով ոտքեր, նստատեղերն ու մեջքը պատրաստված են լվացվող և ջրակայուն նյութից • Երբ երեխան գտնվում է կերեկրման բարձր աթոռին, սկուտեղը պետք է ամրացվի երկու կողմից

[52] Տես նույն տեղում §§ 101239 և 101239.1:

4 ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ (շարունակություն)

Սարքավորումներ	Պահանջներ
Ճոճանակներ / խաղավանդակներ 	**Ճոճանակները / խաղավանդակները պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պահանջներին.** • Հավաքվում և տեղադրվում են ըստ արտադրողի ցուցումների • Պահպանվում են լավ և անվտանգ վիճակում Խնդրում ենք նկատի ունենալ, որ արդեն գնված և հավաքված սարքավորումները չեն կարող փոփոխվել:
Լվացարաններ և զուգարաններ	**Լվացարանները և զուգարանները պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պահանջներին.** • Նորածինների համար նախատեսված զուգարանները, գիշերանոթները և ձեռքերի լվացարանները պետք է լինեն ներսում կամ բացօթյա գործողությունների վայրերի մոտակայքում: • Յուրաքանչյուր 15 նորածնի համար պետք է լինի առնվազն 1 ձեռքերի լվացարան, որը պետք է ախտահանվի յուրաքանչյուր օգտագործումից հետո, ինչպես նաև լվացվի և ախտահանվի յուրաքանչյուր անգամ տաքդիրը փոխելուց հետո: • Զուգարանի սովորած յուրաքանչյուր 5 նորածին երեխայի համար պետք է լինի առնվազն 1 գիշերանոթ՝ չնայած բավարար քանակով գիշերանոթներ չլինելու դեպքում կարող են օգտագործվել գիշերանոթներ և վարժեցնող նստատեղով զուգարաններ: • Օգտագործելիս գիշերանոթը պետք է տեղադրվի հատակին: • Ոչ մի նորածին երեխա չպետք է մնա առանց հսկողության, երբ նա նստում է գիշերանոթի վրա: • Գիշերանոթը պետք է անհապաղ դատարկվի զուգարանակոնքի մեջ և վրան ջուր բացվի, և բոլոր մակերեսները պետք է մանրակրկիտ լվացվեն ու ախտահանվեն: • Ոչ մի դեպքում չպետք է թույլ տալ, որ նորածին երեխաները խաղան գիշերանոթների հետ:

5 ՖԻԶԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնարավոր է, որ երեխաների խնամքի կենտրոններին անհրաժեշտ լինի մասամբ փոխել իրենց հաստատության ֆիզիկական տարածքը՝ լրացուցիչ նորածիններ և (կամ) մանկահասակ երեխաներ տեղավորելու համար: Այս բաժինը նկարագրում է այն հարցերը, որոնք պետք է հաշվի առնվեն երեխաների խնամքի կենտրոնի ֆիզիկական տարածքում փոփոխություններ կատարելիս:

Ներս/Դուրս

Կարող է անհրաժեշտ լինել տարածք, որպեսզի նորածինների/մանկահասակ երեխաների համար տեղադրվեն սարքավորումներ և պարագաներ (օրինակ՝ կերակրման աթոռներ, տակդիրները փոխելու/զուգարանի պարագաներ ու լվացարաններ, օրորոցներ և ճոճանակներ):

Երեխաների խնամքի կենտրոնի տարածքը պետք է՝	Մանկական խնամքի կենտրոններ. ֆիզիկական տարածքին վերաբերող CCLD-ի պահանջներ՝ կապված նորածինների/ մանկահասակ երեխաների հետ
■ Ունենա սարքավորումներ և պարագաներ նորածինների և մանկահասակ երեխաների համար ■ Առանձնացնի հիվանդ երեխաներին **CCLD-ին պետք է ծանուցվի ֆիզիկական տարածքում որոշ փոփոխությունների մասին	■ Ներսում պետք է լինի առնվազն 35 քառակուսի ֆուտ (feet) յուրաքանչյուր երեխայի համար, ■ իսկ դրսում՝ առնվազն 75 քառակուսի ֆուտ յուրաքանչյուր երեխայի համար ■ Ներսում և դրսում տարբեր տարիքային խմբերը պետք է ֆիզիկապես առանձնացված լինեն

Կարող է անհրաժեշտ լինել տարածք, որպեսզի նորածինների/մանկահասակ երեխաների համար տեղադրվեն սարքավորումներ և պարագաներ (օրինակ՝ կերակրման աթոռներ, տակդիրները փոխելու/զուգարանի պարագաներ ու լվացարաններ, օրորոցներ և ճոճանակներ):[53]

Երբ երեխան հիվանդության նշաններ է ցույց տալիս, նա պետք է մեկուսացվի մյուս երեխաներից, և պետք է որոշվի հիվանդության բնույթը: Եթե հիվանդությունը կարող է վարակել մյուսներին, ապա երեխան պետք է մեկուսացվի մյուս երեխաներից մինչև վարակիչ փուլի ավարտը:[54]

Երեխաների խնամքի կենտրոնները պետք է յուրաքանչյուր երեխայի համար ապահովեն առնվազն 35 քառակուսի ֆուտ (feet) ներքին տարածք[55], յուրաքանչյուր երեխայի համար առնվազն 75 քառակուսի ֆուտ բացօթյա տարածք[56], և տարիքային տարբեր խմբերը պետք է ֆիզիկապես առանձնացվեն[57]:

Եթե ակնկալվում է, որ տարածության փոփոխությունները կնվազեցնեն ներսում/դրսում գործողությունների համար տարածքի չափերը, ապա երեխաների խնամքի կենտրոնը նախքան որևէ կառուցվածքային փոփոխություն անելը պետք է այդ մասին գրավոր տեղեկացնի CCLD-ին:

53 Տես նույն տեղում § 101439(b):
54 Տես նույն տեղում § 101226.2(b):
55 Տես նույն տեղում § 101238.3(a):
56 Տես նույն տեղում § 101238.2(a):
57 Տես նույն տեղում §§ 101438.2(b) և 101438.3(b):

5 ՖԻԶԻԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ (շարունակություն)

Վերանորոգում/Շինարարություն

Նորածիններին և մանկահասակ երեխաներին սպասարկելու համար գոյություն ունեցող մանկական խնամքի հաստատության վերանորոգումը կամ ընդլայնումը պահանջում է ֆինանսական և բիզնես պլանավորում, այդ թվում՝

Ստեղծել վերանորոգման բյուջե

Կարևոր է կազմել բյուջեի մանրամասն նախագիծ, որը կընդգրկի նախատեսված վերանորոգումների հետ կապված բոլոր ծախսերը, այդ թվում՝ հումքի, վերանորոգման թիմ վարձելու և շինարարության թույլտվությունների ծախսերը:

Ստուգել վերանորոգման/շինարարության նախագիծը և ստեղծել ժամանակացույց

Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները պետք է կապ հաստատեն իրենց տեղական իրավասության շրջանի Նախագծման, Շինարարության և անվտանգության և Հրդեհի վարչությունների հետ, ինչպես նաև CCLD-ի հետ՝ որոշելու համար, թե արդյոք իրենց վերանորոգման և/կամ շինարարության ծրագրերը պահանջում են ստուգում և հաստատում, և եթե այո, ապա քննարկեն և կազմեն վերանորոգման/կառուցման ժամկետները՝ համապատասխան ժամանակացույցով:

Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված (unincorporated) տարածքներում և որոշ քաղաքներում աշխատող երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները կարող են դիմել հետևյալ 4 ծառայություններին.

1. Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Նախագծման Վարչություն (Տարածքային Նախագծում)
2. Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքների Վարչություն, Շինարարության և անվտանգության բաժին (Շինարարություն և անվտանգություն)
3. Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչություն
4. Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչություն, Համայնքային խնամքի արտոնագրման բաժին (CCLD)

Երեխաների խնամք բոլորի համար. «Ինչպես կառուցել և վերանորոգել Լոս Անջելեսի Շրջանի նախադպրոցական խնամքի և կրթության հաստատությունները» ձեռնարկ է, որն օգնում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված (unincorporated) տարածքներում և որոշ քաղաքներում երեխաների խնամքի ծառայություններ մատուցողին կողմնորոշվել, թե ինչպես սկսել երեխաների խնամքի հաստատությունների վերակառուցման/շինարարության հաստատման գործընթացը:



Նախատեսեք երեխաների խնամքի հաստատությունների վրա հնարավոր հետևանքները, այդ թվում՝ հաստատության ժամանակավոր տեղափոխում շինարարության ընթացքում:

6 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ

Այս բաժինը նկարագրում է այն գործիքները, որոնց միջոցով նորածինների և/կամ մանկահասակ երեխաների ծառայություններն ընդլայնելու համար երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները կարող են թարմացնել իրենց ֆինանսական բիզնեսի մոդելները, ներառյալ՝ 1) մեկանգամյա և պարբերական ծախսերի և եկամտի աղբյուրների, 2) մոտավոր բյուջեների[58] և 3) ֆինանսական պլանավորման աղբյուրների: Ֆինանսական պլանավորումը կարող է հոգնեցուցիչ լինել և ծանր թվալ, բայց դա անհրաժեշտ է, որպեսզի երեխաների խնամքի ծրագիրը հաջողությամբ աշխատի:

Ինչպես որոշել, թե արդյոք նորածինների/մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններ սկսելը կամ ընդլայնելը ֆինանսապես հնարավոր է.

1) Հաշվեք ԾԱԽՍԵՐԸ (մեկանգամյա և շարունակական)
2) Որոշեք, թե որքան ԵԿԱՄՈՒՏ է անհրաժեշտ (երեխայի խնամքի վճար և այլ ֆինանսական միջոցներ) ծախսերը հոգալու և բիզնեսի համար պահուստային գումար կուտակելու համար:

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսեր

Մեկանգամյա ծախսերը մեկ անգամ կամ ոչ հաճախ արվող ծախսեր են: Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսերի օրինակներից են՝

Մեկանգամյա ծախսեր	Օրինակներ
Վերակառուցում և/կամ շինարարություն	Հաստատության ֆիզիկական տարածության փոփոխությունները
Սարքավորումներ, կահույք, պարագաներ	Մանկական օրորոցներ և խաղավանդակներ, պատնեշներ, կրթական նյութեր և այլն:
Վարչական	Արտոնագրման վճարներ, մասնագիտական որակավորման բարձրացում և այլն
Գովազդ	Թռուցիկներ, կայքէջ և այլն



[58] Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ընդլայնումը կարող է հանգեցնել նոր մեկանգամյա և պարբերական ծախսերի, ուստի կարող է օգտակար լինել այդ ծախսերը հաշվի առնելը մոտավոր բյուջեում: Սույն բաժինը ներառում է մեկանգամյա ծախսերի, պարբերաբար կատարվող ծախսերի և եկամուտների համար նախատեսված բյուջեների օրինակները:

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված մեկանգամյա ծախսերի բյուջեի օրինակ

Մեկանգամյա ծախսերի բյուջե	
Մեկանգամյա ծախսեր	**Գումար**
Վերակառուցում և/կամ շինարարություն • Թույլտվությունների ձեռք բերում • Կապալառուներ (պայմանագրով աշխատողներ) • Նյութեր	
Սարքավորումներ, կահույք, պարագաներ • Օրորոցներ և խաղավանդակներ • Կրթական նյութեր • Տակդիրներ և թաց անձեռոցիկներ	
Վարչական • Արտոնագրման վճարներ • Մասնագիտական որակի բարձրացում	
Գովազդ • Այցեքարտեր • Թռուցիկներ • Կայքէջեր	
Ընդհանուր ծախսեր	



Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսեր

Ընթացիկ ծախսերն այն ծախսեր են, որոնք արվում են շարունակաբար:
Նման ընթացիկ ծախսերի օրինակները ներառում են.

Ընթացիկ ծախսեր	Օրինակներ
Աշխատակազմ	Տնօրեն, խնամող/ լիովին որակավորված ուսուցիչ, ուսուցիչ, ուսուցչի օգնական, խոհարար, փոխարինող ուսուցիչ / օգնական
Աշխատակիցներին տրվող նպաստներ	Առողջության ապահովագրության, աշխատողների փոխհատուցում, արձակուրդային և հիվանդության ժամեր
Սարքավորումներ և պարագաներ	Դպրոցական պարագաներ և գրենական պիտույքներ
Կենցաղային ծառայություններ	Ջեռուցում / Օդորոկում, էլեկտրականություն, գազ, հեռախոս, ինտերնետ
Վարչական	Վարձակալություն, պատասխանատվության ապահովագրություն (liability insurance), միության անդամավճարներ, հաշվապահական և իրավաբանական ծառայությունների ծախսեր
Փոխադրամիջոցներ (եթե կիրառելի է)	Ավտոմեքենաներ/փոքր ավտոբուսներ, վառելանյութ

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսերի բյուջեի օրինակ

Ծախսեր	Ամսական	Տարեկան ընդհանուր
Աշխատակազմ		
Տնօրեն/տեղամասի ղեկավար/ երեխաների խնամքի կենտրոնի սեփականատեր		
Վաղ տարիքում խնամքի և կրթության (ECE) ծառայություններ մատուցող / ուսուցիչ (#)		
Վաղ տարիքում խնամքի և կրթության ծառայություններ (ECE) մատուցող / ուսուցչի օգնական (#)		
Խոհարար		
Մաքրում/տեխնիկական սպասարկում		
Վաղ տարիքում խնամքի և կրթության ծառայություններ (ECE) մատուցող / ուսուցչի օգնական (#)		
Քարտուղար / հաշվապահ		
Փոխարինողներ (նվազագույն աշխատավարձ/ ժամում x # շաբաթական)		
Ընդհանուր աշխատավարձ		
Աշխատակիցներին տրվող նպաստներ		
Բժշկական ապահովագրություն		
Աշխատողի փոխհատուցում		
Արձակուրդային և հիվանդության ժամեր		
Ընդհանուր աշխատողների նպաստներ		
Կենցաղային ծառայություններ		
Վարձակալում		
Ջեռուցում/օդորակիչ		
Էլեկտրաէներգիա		
Գազ		
Հեռախոս		
Ինտերնետ		
Ընդհանուր կենցաղային ծառայություններ		
Սարքավորումներ և պարագաներ		
Նորածինների և/կամ մանկահասակ երեխաներին հատուկ սարքավորումներ (կերակրելու, տակդիրները փոխելու համար)		
Խոհանոցային պարագաներ		
Գրենական պիտույքներ		
Կրթական (խաղալիքներ, գրքեր, արվեստի և արհեստի պարագաներ և այլն)		

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված ընթացիկ ծախսեր (շարունակություն)

Ծախսեր	Ամսական	Տարեկան ընդհանուր
Վարչական		
Գովազդ (թռուցիկ, գրքույկ, կայքէջ և այլն)		
Արտոնագրի վճարներ		
Պատասխանատվության ապահովագրություն (արժեք / երեխա / տարի)		
Հրատարակչությունների բաժանորդագրություն/միությունների անդամակցություն		
Մասնագիտական զարգացում (առաջին օգնության ցուցաբերում, անձնակազմի գնահատանք և այլն)		
Աուդիտ (ստուգում)		
Ընդհանուր վարչական		
Փոխադրամիջոց		
Ավտոմեքենաներ/փոքր ավտոբուսներ (սպասարկում, վառելանյութ և այլն)		
Էքսկուրսիաներ/ ճամփորդություններ		
Ընդհանուր փոխադրամիջոցների		

6 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ ՄՈԴԵԼ (շարունակություն)

Երեխաների խնամքի ծրագրի մեկանգամյա և պարբերական ծախսերը հաշվարկելուց հետո հաջորդ քայլը պարզելն է, թե ինչ եկամուտներ են անհրաժեշտ երեխաների խնամքի ծրագրի ծախսերը հոգալու և պահուստային դրամ հավաքելու համար:

Եկամուտները կարող են կուտակվել տարբեր աղբյուրներից, այդ թվում՝

1) Երեխաների խնամքի վճարները, որոնք վճարվում են ընտանիքներն իրենց սեփական գրպանից

2) Կառավարության փոխհատուցումները (սուբսիդիաներ), որոնք փակում են որոշ ընտանիքների երեխաների խնամքի վճարները

3) Այլ աղբյուրներ, օրինակ՝ դրամաշնորհները

Նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայությունների ընդլայնման հետ կապված եկամուտներ

Գրանցում

- Որոշեք երեխաների թիվը՝ ըստ տարիքային խմբերի, որոնք սպասարկվելու են
  Առաջարկ. հաշվարկեք եկամուտը՝ օգտագործելով տարեկան գրանցումների մոտավորապես 75-90%-ը:

Սակագներ

- Արդյո՞ք ծրագրի շրջանակներում յուրաքանչյուր երեխայի համար կգանձվի անփոփոխ շաբաթական կամ ամսական վճար, թե՞ կգանձվի ժամավճար:
- Արդյո՞ք ծրագրի շրջանակներում 3-ժամյա խնամքի համար կգանձվի ժամավճար (օրինակ՝ կես դրույքով խնամքի, թե լրիվ դրույքով խնամքի)
- Արդյո՞ք ծրագիրը քույր-եղբայրների համար կտրամադրի «մի քանի երեխաների զեղչ»:

Երեխաների խնամքի վճարներ

- Արդյո՞ք ծրագրի շրջանակներում երեխաների խնամքի համար տարբեր վճարներ կգանձվեն՝ կախված տարիքային խմբից:

Գրանցման վճարներ

- Արդյո՞ք ծրագիրը գումար է գանձում:
- Եթե այո, ապա որքա՞ն հաճախ:
- Մեկ ընտանիքի՞, թե՞ մեկ երեխայի համար:

Փոխադրման վճարներ

- Փոխադրամիջոց տրամադրելու դեպքում արդյո՞ք ծրագիրը կգանձի փոխադրամիջոցի վարձավճար:

Նկատառումներ

7 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Այս բաժնում նկարագրվում է ընտանիքների իրազեկման աշխատանքը, ինչը ևս մեկ կարևոր նկատառում է՝ կապված նորածինների և մանկահասակ երեխաների համար ծառայությունների ընդլայնման հետ: Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները իրականացնում են իրազեկման միջոցառումներ՝ նոր ընտանիքներին և համայնքներին իրենց երեխաների խնամքի ծառայությունների մասին տեղեկացնելու համար:

Այս բաժնում նկարագրվում է՝

1) Տեղեկություններ, որոնք ընտանիքները ցանկանում են իմանալ
2) Իրազեկման տարբեր եղանակներ

Տեղեկատվություն

Երեխաների խնամքի ծառայություններ մատուցողները գուցե ցանկանան պարզաբանել այս նպաստների տեսակները[59], որոնք նախատեսված են իրենց ծրագրերով.

- Երեխայի զարգացման հետ կապված օգուտները, ինչպիսիք են սոցիալ-հուզական, ճանաչողական, լեզվական և շարժական զարգացումը[60]
- Հուսալի խնամք աշխատող ընտանիքների համար
- Ճկուն աշխատանքային ժամեր
- Սնունդ և նախուտեստներ (եթե կիրառելի է)
- Մատչելի գներ
- Որակավորված աշխատակազմ
- Երեխաների համար նախատեսված հատուկ միջոցառումներ՝ ըստ տարիքի
- Տարիքին համապատասխան խաղալիքներ և ուսումնական ծրագրեր

[59] Հիշեք, որ ծառայություններ մատուցողի առավելությունների մասին հաղորդագրություն ուղարկելու միևնույն ձևը կարող է չաշխատել բոլոր ընտանիքների դեպքում:

[60] »Զրոյից երեք, Ինչո՞ւ 0-ից 3» (2023), https://www.zerotothree.org/why-0-3/ (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին); Լոս Անջելեսի Երեխաների խնամքի միություն.«Որակյալ երեխաների խնամքի ընտրություն (2023), https://www.ccala.net/connect-to-child-care/choosing-quality-child-care/ (վերջին այցը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ին):

7 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄ (շարունակություն)

Իրազեկման եղանակներ

Աղբյուրների և առաջարկների գործակալություններ (R&Rs)

- Կապ հաստատեք ձեր տեղական Աղբյուրների և ուղղորդումների գործակալության հետ՝ Երեխաների խնամքի ծրագիրը որպես առաջարկ ներառելու այն ընտանիքների համար, ովքեր փնտրում են նորածինների և մանկահասակ երեխաների խնամքի ծառայություններ:

Սոցիալական մեդիա և այլ տեխնոլոգիաներ

- Խթանել ծրագիրը սոցիալական ցանցերի և ծրագրի կայքէջի միջոցով (ներառել տեսանյութեր և այլն): Հնարավոր է, որ տեղական Փոքր բիզնեսի զարգացման կենտրոններն առաջարկեն անվճար մարքեթինգային աջակցություն փոքր բիզնեսի սեփականատերերին:
- Տրամադրեք QR կոդ՝ ծրագրի մասին տեղեկությունները հեշտությամբ հասանելի դարձնելու համար:

Անձամբ ծանոթություններ և տեղեկության բանավոր տարածում

- Մասնակցեք համայնքային միջոցառումներին և անձամբ գովազդեք ծրագիրը:
- Խրախուսեք ընտանիքներին ձեր ծրագրի մասին տեղեկություններ փոխանցել իրենց ընկերներին, հարազատներին և գործընկերներին:
- Տրամադրեք QR կոդ, որպեսզի սմարթֆոնների միջոցով հեշտությամբ գտնեն ծրագրի մասին տեղեկատվություն:
- Ներգրավվեք այնպիսի շրջանակներում, որոնց մեջ մտնում են հղի, վերջերս ծննդաբերած կամ վերջերս ծնող կամ խնամող դարձած մարդիկ:

Այս աղբյուրների ցանկը պարունակում է հղումներ, կապի տվյալներ և համառոտ տեղեկություններ այս ձեռնարկում նշված պետական հաստատությունների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների և ֆինանսական պլանավորման աղբյուրների մասին:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դաշնային

ԱՄՆ Փոքր բիզնեսի ասոցիացիա, Փոքր բիզնեսի զարգացման կենտրոններ (U.S. Small Business Association, Small Business Development Centers, (SBDCs))
213-634-3855 •
https://www.sba.gov/local-assistance/resource-partners/small-business-development-centers-sbdc
Փոքր բիզնեսի զարգացման կենտրոնները խորհրդատվություն և ուսուցում են տրամադրում փոքր բիզնեսի ներկայացուցիչներին՝ ներառյալ փոքր բիզնեսի վարչակազմի հետ աշխատելով, որպեսզի սկսնակ ձեռնարկություններին և առկա բիզնեսը ընդլայնելուն աջակցելու համար մշակեն և տրամադրեն տեղեկատվական գործիքներ: Նրանց «Ինչպես սկսել որակյալ երեխայի խնամքի բիզնեսը» հրապարակումը կարող եք գտնել այստեղ:

Նահանգային

Կալիֆորնիայի Սոցիալական Ծառայությունների Վարչություն, Հանրային խնամքի արտոնագրման բաժին (California Department of Social Services, Community Care Licensing Division (CCLD))
(916) 654-1541 • www.cdss.ca.gov
Համայնքի խնամքի արտոնագրման բաժնի (CCLD) առաքելությունն է համայնքային խնամքի ոլորտում յուրաքանչյուր անձի առողջության, անվտանգության և կյանքի որակի ապահովումը՝ արդյունավետ համագործակցային կարգավորման համակարգ կիրառելու միջոցով: Երեխաների Խնամքի Արտոնագրման Ծրագիրը Կալիֆորնիայում ապահովում է վերահսկում և օրենքների պահպանում արտոնագրված երեխաների խնամքի կենտրոններում և երեխաների ընտանեկան խնամքի տներում 19 Շրջանային Գրասենյակների միջոցով: Տեղական տարածքային գրասենյակների ցանկին կարելի է ծանոթանալ այստեղ:

Լոս Անջելեսի Շրջան

Լոս Անջելեսի Շրջանի Վերահսկիչների Խորհուրդ (Los Angeles County Board of Supervisors)
(213) 974-1411 • www.bos.lacounty.gov
Վերահսկիչների Խորհուրդը Լոս Անջելեսի Շրջանի, որը չարտերային շրջան է, կառավարող մարմինն է: Որպես այդպիսին՝ այն ունի յուրահատուկ գործառույթներ՝ ծառայելու որպես ամբողջ Միացյալ Նահանգներում ամենամեծ և ամենաբարդ շրջանի կառավարության գործադիր և օրենսդիր ղեկավար: Քաղաքացիական ծառայության անձնակազմը, որը կատարում է Շրջանի վարչությունների և գործակալությունների պարտականությունները, սպասարկում է Շրջանի ավելի քան 10 միլիոն բնակչության կարքիները: Վերահսկիչների Խորհուրդը նաև վերահսկում է գոտիավորման դիմումները և պատասխանատու է Շրջանի 88 չընդգրկված տարածքներում (unincorporated areas) քաղաքային ծառայությունների համար:

Լոս Անջելեսի Շրջանի Սպառողների և Բիզնեսի Հարցերի Վարչություն (Los Angeles County Department of Consumer and Business Affairs DCBA)
(800) 593-8222 • https://dcba.lacounty.gov/
Լոս Անջելեսի Շրջանի Սպառողների և Բիզնեսի Հարցերի Վարչությունը ծառայություններ է մատուցում սպառողներին, ձեռնարկություններին և համայնքներին կրթության, շահերի պաշտպանության և բողոքների լուծման միջոցով: DCBA-ն հնարավորություն է տալիս փոքր բիզնեսներին պետական պայմանագրեր կնքել և հավաստագրեր է տալիս տեղական փոքր բիզնեսներին: DCBA-ի Small Business Concierge-ը «մեկ պատուհանի» սկզբունքով կենտրոնացված ծառայություններ է մատուցում ձեռնարկատերերին՝ օգնելու նրանց հաջողակ փոքր բիզնես սկսել Լոս Անջելեսի Շրջանում:

Լոս Անջելեսի Շրջանի Տնտեսական Զարգացման Վարչություն (Los Angeles County Department of Economic Opportunity)
844-777-2059 • https://opportunity.lacounty.gov/
Լոս Անջելեսի Շրջանի Տնտեսական Զարգացման Վարչությունը անվճար տրամադրում է անհատական խորհրդատվություն՝ ներառյալ սեմինարներ, իրավական օգնության ուղղորդումներ, դրամաշնորհային հնարավորություններ և այլն, որի նպատակն է օգնել բնակիչներին սկսել, շահագործել և հավաստագրել իրենց փոքր բիզնեսը:

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լոս Անջելեսի Շրջան (շարունակություն)

Լոս Անջելեսի Շրջանի Հրշեջ Վարչություն (Հրշեջ Վարչություն) (Los Angeles Fire Department)
(323) 881-2411 • www.fire.lacounty.gov
Հրդեհի կանխարգելման շրջանային միավորները կենտրոնանում են՝ հանրությանը կրթելու անվտանգության ճիշտ գործողություններ կատարելու առավելությունների հարցում, ինչպես նաև գտնելու և վերացնելու այն բոլոր վտանգավոր պայմանները, որոնք սպառնում են կյանքին, շրջակա միջավայրին և շինություններին: Հրդեհի կանխարգելման շրջանային միավորները գրասենյակներ ունեն ամբողջ Լոս Անջելեսի Շրջանում, և դրանք բաժանված են երեք աշխարհագրական շրջանների՝ Հյուսիսային, Կենտրոնական և Արևելյան Շրջաններ:

Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Նախագծման Վարչություն (Տարածքային Նախագծում) (Los Angeles County Department of Regional Planning)
(213) 974-4103 • www.planning.lacounty.gov
Լոս Անջելեսի Շրջանի Տարածքային Նախագծման Վարչությունը իրականացնում է Լոս Անջելեսի Շրջանի չընդգրկված (unincorporated) տարածքներում հողատարածքների օգտագործումը ծրագրելու բոլոր գործառույթները: Տարածքային Նախագծման Վարչության ծառայությունները ներառում են՝ երկարաժամկետ նախագծերի կազմում, հողատարածքների կառուցապատման խորհրդատվություն, նախագծի/գործի ընդունում և վարում, շրջակա միջավայրի ստուգում, տարածքների գոտիավորման օրենքների կիրառում Լոս Անջելեսի Շրջանի յուրաքանչյուր չընդգրկված համայնքում (unincorporated areas): Տարածքային պլանավորման ստորաբաժանումների ցանկին կարելի է ծանոթանալ այստեղ:

Լոս Անջելեսի Շրջանի Վաղ Տարիքում Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակ (The Office for the Advancement of Early Care and Education (OAECE))
(213) 974-6411 • www.childcare.lacounty.gov
Վաղ Տարիքում Երեխաների Երեխաների Խնամքի և Կրթության Զարգացման Գրասենյակը (OAECE) մշակում է քաղաքականության առաջարկներ, հեշտացնում է նախագծումը և տրամադրում է ծառայությունների լայն շրջանակ, որոնք ուղղված են վաղ խնամքի և կրթության ծրագրերի մատչելիությանը և որակի բարձրացմանը: OAECE-ն աջակցում է ջանքերին՝ խրախուսելու նախադպրոցական խնամքի և կրթության ծառայությունների ընտրության հարցում ծնողների տեղեկացված լինելը և այս ծառայություններում ծնողների բովանդակալից ներգրավվածությունը: Եվ վերջապես, OAECE-ն աշխատում է տարբեր ոլորտներում՝ նպաստելու համար, որ ընտանիքներին հասանելի լինի այն հատուկ աջակցությունը, որի կարիքն ունեն:

Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Աշխատանքների Վարչություն, Շինարարության և անվտանգության բաժին (Շինարարություն և Անվտանգություն) (Los Angeles County Department of Public Works, Building & Safety Division)
(626) 458-3173 • www.dpw.lacounty.gov
Հանրային Աշխատանքի Վարչության Շինարարության և Անվտանգության Բաժինը տրամադրում է ծառայություններ՝ ապահովելու շինությունների անվտանգ կառուցվածք, կառուցում, շինարարական ավարտված նախագծերի հաստատում և օրենքների պահպանում սկսած 1933թ.-ի մարտից, երբ ընդունվեցին Շրջանի՝ շինարարության կանոններն ու չափանիշները: Շինարարության և Անվտանգության Բաժինը տրամադրում է մասնավոր անձանց և համայնքի սեփականություն համարվող շինությունների և կառույցների շինարարական թույլտվություն, կառուցվածքի, շինարարության, սարքավորման, քանդելու և խնամքի/պահպանման ստուգում և հսկողություն՝ Շրջանի շինարարական կանոնների ու կանոնակարգերի կիրառման միջոցով: Չընդգրկված համայնքներում (unincorporated communities) շինարարական ծառայություններ են տրամադրվում Հանրային Աշխատանքի գլխավոր գրասենյակներում՝ Շինարարության և Անվտանգության 11 վարչաշրջանային գրասենյակներից մեկում, որոնք ծառայում են չընդգրկված համայնքներին, 14 Պայմանագրային Քաղաքների (Contract City) գրասենյակներում, որոնք ծառայում են ընդգրկված քաղաքներին:
Թույլտվության դիմումները և թույլտվության վկայականները կարող են ուղարկվել կամ ձեռք բերվել առցանց՝ EPIC-LA կայքէջի միջոցով:

ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անվճար իրավաբանական օգնություն

Երեխաների խնամքի իրավաբանական կենտրոն (Child Care Law Center)

(415) 558-8005 • www.childcarelaw.org

Երեխաների խնամքի իրավաբանական կենտրոնը օրենսդրության, հանրային աջակցության և դատերի միջոցով կենտրոնանում է ցածր եկամուտներով ընտանիքների համար մատչելի երեխաների խնամքը ավելացնելու, երեխաների խնամքի ծառայություններ մատուցողների արդար վարձատրության, հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների վրա: Երեխաների խնամքի իրավաբանական կենտրոնը երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին տրամադրում տեղեկատու գրքեր և անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հանրային փաստաբան (Public Counsel)

(213) 385-2977 x 300 • www.publiccounsel.org

1970 թ.-ին հիմնադրված Հանրային փաստաբանը պետության ամենամեծ անվճար իրավաբանական ծառայություններ տրամադրողն է , որն օգտագործում է իրավական նորարական մոդելներ՝ խթանելու արդարադատությունը, հույսը և հնարավորությունները ցածր եկամուտներով և ոչ սպիտակամորթ համայնքերում: Հանրային փաստաբանի Վաղ տարիքում խնամքի և կրթության իրավաբանական բաժինը երեխաների խնամքով զբաղվողներին անվճար իրավաբանական ծառայություններ մատուցող միակ կառույցն է Լոս Անջելեսի Շրջանում: Ծրագրի նպատակն է պահպանել և ավելացնել երեխաների որակյալ նախադպրոցական խնամքն ու կրթությունը Լոս Անջելեսի Շրջանում՝ օգնելով **ծառայություններ մատուցողներին** հաղթահարել երեխաների խնամքի ծրագրերի բացման և դրանց աշխատեցնելու խոչընդոտները: Հանրային փաստաբանը, աջակցելով և երեխաների ընտանեկան խնամքի տների մատակարարներին, և շահույթ չհետապնդող (հասարակական) երեխաների խնամքի կենտրոններին, օգնում է խնդիրների լուծման հարցում, ներառյալ՝ սեփականատերերի խտրական վերաբերմունք տանը կազմակերպվող ցերեկային խնամքի ծառայություններ մատուցողների նկատմամբ, հողատարածքի օգտագործման / գոտիավորման սահմանափակումներ՝ պարտադրված տեղական իշխանությունների կողմից, նահանգի արտոնագրման կանոններին համապատասխանում, բիզնեսի՝ պատասխանատվության և ռիսկերի կառավարման հետ կապված խնդիրների լուծում, ծառայություններ մատուցողներին (նրանց բիզնեսը պաշտպանող պայմանագրերի և գործարքային այլ փաստաթղթերի կազմում, աշխատանքային օրենքների ըմբռնում և դրանց կատարում:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐ և ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երեխաների խնամքի աղբյուրների և ուղղորդումների ցանց (R&R)
(California Child Care Resource and Referral Network (R&R))
(415) 882-0234 • www.rrnetwork.org
Երեխաների խնամքի աղբյուրների և ուղղորդումների գործակալությունները (R&R) պետության կողմից ֆինանսավորվող համայնքային ծրագրեր են, որոնք գոյություն ունեն Կալիֆորնիայի յուրաքանչյուր շրջանում: R&R-ները կազմում են լավ զարգացած համակարգ, որոնք օգնում են ծնողներին, երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին և տեղական համայնքներին: Տեղական աղբյուրների և ուղղորդումների գործակալություններն իրենց համայնքներում պահում են երեխաների խնամքի ծառայություններ մատուցողների՝ համընդհանուր տվյալների համակարգ, ներառյալ արտոնագրված երեխաների խնամքի տների և երեխաների խնամքի կենտրոնների տվյալների, ստուգում են, թե ինչ է ծառայություններ մատուցողների արտոնագրման կարգավիճակը, ինչ լեզուներով են խոսում, տարիքային ինչ խմբերի են ծառայում, ինչ ժամեր են առաջարկում և կենտրոններում կամ երեխաների ընտանեկան խնամքի տներում հասանելի քանի տեղ կա, աշխատում են երեխաների խնամքի ծառայություններ մատուցողների հետ՝ բարելավելու խնամքի որակը և պահպանելու և ավելացնելու քանակը իրենց շրջաններում, առաջարկում են վերապատրաստում, որն օգնում է ծառայություններ մատուցողներին մնալ այդ գործում, և կրթում են տեղական համայնքներին և առաջնորդներին՝ հասկանալու երեխաների խնամքի հետ կապված խնդիրները և պատրաստվելու երեխաների խնամքի կարիքները հոգալուն: R&R-ների ծառայություններն անվճար են և հասանելի երեխաների խնամքի բոլոր ծառայություններ մատուցողների համար:

Լոս Անջելեսի երեխաների խնամքի միություն (The Child Care Alliance of Los Angeles)
(323) 274-1380 • www.ccala.net
Լոս Անջելեսի Երեխաների խնամքի միությունը (CCALA) Լոս Անջելեսի Շրջանում աղբյուրների և ուղղորդումների (R&R), ինչպես նաև Այլընտրանքային վճարումների (Alternative Payment) 10 գործակալությունների միջև գործընկերություն է: Այս տասը գործակալությունները միասին ծառայություններ են մատուցում Լոս Անջելեսի Շրջանի հազարավոր ընտանիքների: Այդ ծառայությունները ներառում են՝ օգնել ընտանիքներին գտնել և ճանաչել համայնքում գոյություն ունեցող աջակցության ծրագրերը, երեխաների խնամքով զբաղվողներին առաջարկել համապարփակ վերապատրաստում և մասնագիտական զարգացման այլ ծրագրեր, իրավասու ընտանիքներին տրամադրել երեխաների խնամքի վարձի փոխհատուցման կտրոններ (subsidized child care vouchers), ընտանիքներին և երեխաների խնամքի ծառայություններ մատուցողներին տալ տեղեկություններ այնպիսի թեմաների մասին, ինչպիսք են՝ շահերի պաշտպանումը, առողջությունը, սնուցումը և ընտանիքներն ամրացնող այլ նախաձեռնությունները: Ամբողջ շրջանի տարածքում CCALA-ների հետ համագործակցող գործակալությունները հնարավորություն ունեն տրամադրելու երեխաների խնամքի և վաղ կրթության համապարփակ ծառայություններ և ծրագրեր, բամաթիվ լեզուներով կապ հաստատելու անմիջապես ծառայություններ մատուցողների, ծնողների և երեխաների հետ և ունենալու մշակութային առանձնահատկությունների գիտակցում ու խորը պատկերացում իրենց եզակի համայնքների մասին՝ տարբեր հաճախորդների հետ արդյունավետ աշխատելու համար:

Zero to Three («Զիրո թու թրի»)
(202) 638-1144 • https://www.zerotothree.org/ 1977 թվականից ի վեր ՝ Zero to Three-ն վաղ տարիքում զարգացման գիտության մեջ իր փորձը փոխանցել է առաջնահերթ ծրագրերի, ոլորտի առաջատար ուսուցման և աղբյուրների և քաղաքական արձագանքող լուծումների: Որպես անդամակցության վրա հիմնված կազմակերպություն՝ նրանք ներկայացնում են դինամիկ, փոխկապակցված մասնագետների համայնք տարբեր ոլորտներում, որոնք կենտրոնացած են երեխաների զարգացման վրա, ովքեր ձգտում են բարելավել իրենց գիտելիքներն ու հմտությունները: Նրանց աշխատանքը նպաստում է երեխաների, նրանց ընտանիքների և մեր ապագայի համար երկարատև, փոխակերպող փոփոխություններին:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Brightwheel («Բրայթուիլ»)
(800) 966-7353 • www.mybrightwheel.com
Brightwheel-ը համապարփակ ծրագրային հարթակ է նախադպրոցական, երեխաների խնամքի հաստատությունների, ճամբարների և արտադպրոցական ծրագրերի համար: Brightwheel-ն օգնում է ուսուցիչներին կառավարել իրենց աշխատանքային օրը և շփվել ծնողների հետ, ծնողներին ավելի խորը պատկերացում է տալիս այն մասին, թե ինչ են սովորում իրենց երեխաները և ավտոմատացնում է վարչական գործողությունների կառավարման գործընթացը: Ապացուցված է, որ հարթակը խնայում է ուսուցիչների և վարչական աշխատողների օրական մինչև մեկ ժամը՝ միաժամանակ բարձրացնելով ծնողների բավարարվածությունը և նրանց համար ավելի սերտ կապ ապահովելով իրենց երեխաների ուսուցման գործընթացի հետ: Նրանց տարեկան բյուջե ծրագրելու գործիքը հասանելի է այստեղ:

Cengage («Սենգայջ»)
(800) 310-5661 • www.cengage.com
Cengage -ը ստեղծում է սովորելու փորձառություններ, որոնք վստահություն և եռանդ են ներշնչում ապագա ուսանողների իղձերի համար: Տրամադրելով բարձրագույն կրթություն, K-12, մասնագիտական, գրադարանային և աշխատուժի ուսուցման շուկաներ ամբողջ աշխարհում՝ Cengage -ը ողջունում է յուրաքանչյուր աշակերտի և տալիս դիզայնի գործիքներ, որոնք մատչելի են դարձնում ուսումը բոլորի համար: Նրանց մոտավոր բյուջեն կարելի է գտնել այստեղ:

Start Small Think Big («Սթարթ սմոլ, թինք բիգ»)
(646) 723-4053 x101 • www.startsmallthinkbig.org/
Start Small Think Big-ը շահույթ չհետապնդող ծրագիր է, որը նվիրված է ձեռնարկատիրության մեջ արդարությանն ու համագործակցությանը՝ կապելով փոքր բիզնեսները այն աղբյուրների և համայնքի հետ, որոնք նրանց անհրաժեշտ էն բարգավաճելու համար: Start Small Think Big ծրագիրը կենտրոնանում է BIPOC ձեռնարկատերերի, կանանց, LGBTQIA+ համայնքի ներկայացուցիչների, ներգաղթյալների, վետերանների, հաշմանդամություն ունեցող ձեռնարկատերերի, ցածր եկամուտ ունեցող ձեռներեցների և նախկինում բանտարկված ձեռներեցների հետ համագործակցության վրա: Նրանց եկամուտի մասին հաշվետվության նմուշը կարելի է գտնել այստեղ: